

ԳՈՒՌԳԵՆ ԲՈՐՅԱՆ

ԺԱՆԱԴԱՐՆ
ԴԵՊՈ ԾՈՎ

891.99

F-89

CO




01 JAN 2009

891.39

Բ-89

ԳՈՒՐԳԵՆ ԲՈՌՅԱՆ



ՀԱՅԳԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ

1940

5 MAR 2013

24449



1233
41

ГУРГЕН БОРЯН

Дорога к морю

Армгиз Ереван 1940

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
 ՀԱՅԱՍՏԱՆԵՆԻ 20-ԱՄԾԱԿԻՆ ԵՄ ՆԱԴԻՐՈՒՄ
 ԳԻՐԸԹ

ԳՈՎՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Միլիոն սրտի կարոտն առնեմ,
 Թե՛ հազար երգ, հազար քնար,
 Միտ քնքույշ խոսքե՛ր առնեմ—
 Հազար սրտում կապած կամար,
 Ջահել երգչիս այս խանդավառ
 Խոսքե՛րն առնեմ նվիրական,—
 Ու քո պայծառ զովքն անեմ
 Ջահել՝, ազա՛տ իմ Հայաստան:

Առած երգի իմ այրուծին,
 Բյուր մտքերով, բյուր խոհերով,
 Կարծես անցնում եմ դարերի
 Անծայրածիր ճանապարհով,—
 Եվ հառնում է իմ դեմ կրկին
 Ժողովրդիկ հերոսովյան
 Հավերժ անմեռ, վսեմ ոգին,—
 Անդո՛ւլ, անդո՛ւլ իմ Հայաստան:

Տեսար արյուն, ալիեր ու դավ,
Ահեղ շառա'շը սրերի,
Տեսար անկուշտ հազար երախ,
Տեսար բոցը հրդեհների,
Տեսար լուծը բռնակալի—
Լինի օտար, թե սեփական
Եվ արցունքը բյուր մայրերի
Թրջեց քո հո'ղը, Հայաստա'ն:

Բայց դու կուրծքդ տված հողմին,
Հրդեհների բոցերին խուլ,
Չարին, արնոտ արշավողին
Քո քաջ Դավթի հզոր զարկով՝
Ե'տ քշեցիր քո սուրբ հողից,
Օջախի ծովսն ելավ նորից
Ժողովրդի հայրենի տան,—
Դու միշտ անմե'ռ իմ Հայաստան:

Քո քաջերի երկաթ բազկով,
Ժողովրդիդ հզոր կամքով,
Մոխիրներից քո սեփական,
Հայացքդ դեպ լույս ապաղան,
Վե'ր հառնեցիր հրահնչուն,
Որպես Փյունիկ հեքիաթ թռչուն
Եվ քայլեցիր նորից հաստատ,
Անո'ւշ երկիր իմ Հայաստան:

Մոտեցավ ժա'մը հաղթության.
Կարմիր գնդերը լենինյան
Քեզ փրկարար ազատության
Արև աշխարհը բերեցին,—

Տենչանքի պես երջանկաշող
Եվ կախարդող հանց ծիածան,
Արշալույսի նման գերող,
Նորո'գ երկիր, իմ Հայաստան:

Եվ երկնեց ծո'վը ծիրանի,
Ու հրեղեն այդ գոռ ծովից,
Նման հուրհեղ մեր վահագնին,
Դու ծնվեցիր կյանքով նորից,
Որպես նորո'գ մի հայրենիք,
Որպես հույսի', լույսի' օրրան,
Որպես դավակ Հոկտեմբերի,
Կարմրապսա'կ իմ Հայաստան:


Եվ դու այսօր ազատ ես հար:
Քո դաշտերի բերքի' համար,
Երգի' համար քո հաղթության,
Քո մայրերի , մանկիկների
Այս արևշող կյանքի' համար,
Որ կապել է շքեղ կամար,
Դու քո մեծ մո'րն ես պարտական,—
Ծաղկո'ղ երկիր իմ Հայաստան:

Նա', որ անծայր մեծ Հյուսիսից
Քեզ փրկության դրոշ պարզեց,
Նա', որ սնեց քեզ իր կաթով,
Ու փայփայեց, կռչեց կյանքի,
Նա', որ տվեց ուժ կենսաթով,
Ինչպես Գեյան իր զավակին:
Եվ այն մարդուն ես պարտական,
Որ քո արև'ն է, Հայաստան.

Որի անունը շրթերիդ
 Կրում ես հար, որի համար
 Հզոր սրտում ժողովրդի
 Անհատների փառք ենք զրել,
 Որին հղած սիրո, երգի
 Ծովի համար հավերժական
 Տիեզերքը քիչ է անգամ,—
 Վերածնվա՛ծ իմ Հայաստան:

Եվ ո՛չ մի Բել, ո՛չ մի Կյուրոս,
 Ո՛չ մի Լուկուլլ, կամ Թե Դարեհ,
 Զե՛ն հանդգնի— լկտի, գոռոզ,—
 Քո սահմանները պաշարել,
 Քանզի հզոր եղբայրներիդ
 Անհուն սիրով անդամաճան,
 Ազա՛տ ես դու և երջանիկ
 Դու նորաստե՛ղծ իմ Հայաստան:

Արեւելքի դռների մոտ,
 Որպես անհաղթ կարմիր զինվոր
 Գիշերներից մինչ առավոտ
 Կանգնած ես դու անհաղթ, հզոր,
 Եվ ինչպես հո՛ւրն հավերժական
 Քո ապագան չքնաղ ու պերճ
 Լուսավո՛ր է դարերի մեջ,
 Սովետական իմ Հայաստան:



Ն Ո Ր Ա Շ Խ Ա Ր Հ

Բոցավառում է սիրտըս նոր կյանքի
 Մի անհուն կարոտ,
 Իջե՛լ է ահա իմ ջահել սրտին
 Կարմի՛ր առավոտ...
 Ես քե՛զ եմ երգում, մեր նոր աշխարհի
 Հրեղեն կամար,
 Որ մայր ես դարձել, աղբյու՛ր ես սարձե՛լ՝
 Երգերիս համար:

Ս Ի Ր Տ

Ես իմ սրտին երբեք դավող երգ չեմ հյուսում,
 Իմ հոգու հետ նա՛ է միայն, նա՛ է խոսում,
 Նրան դիմիր որպես տիրոջ. նա մանկան պես
 Ինչ որ ունեմ դեռ չըպատմած, կըպատմի քեզ..

ԵՐԳ ԳՐԱԾ ԳՈՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ

1

Այստե՛ղ եմ ես... Քո քաղաքում, ո՛վ
 Առաջնորդ արևածին,
 Երջանկության հազար աղբյուր սիրտս ու
 հոգիս ողողեցին,
 Զահել հոգուս հույզով անմար, վառ կարոտով,
 սիրով անհագ
 Գոչում եմ ես, քեզ բյո՛ւր ողջուն
 պայծառանուն Գորի քաղաք:

Հովտում արձակ փռվել է նա, կապած Քուռի
 արծաթ գոտին,
 Հայացքով ջինջ նայում է լուռ,
 Տրիակիցան գոռ լեռներին,
 Որոնք կարծես գազաթներով երկնասլաց
 ու ահագին,
 Որպես պատվո հաղթ պահակներ հսկում են
 լույս այս քաղաքին:

Վեհ Կազմեհը իր մերձավոր ելբրրուսի հետ
 միասին,
 Արծրվային սուր հայացքով, երջանկության
 շողջ երեսին,

Կարծես հեռու հորիզոնից ձայն է տալիս,
 հպարտ կանչում.
 — Առաջնորդի հայրենական լույս քաղաքին
 հաղա՛ր ողջուն:

2

Ահա եկա ես տեսության քո տնակին
 Հայրենական,
 Ինչպե՞ս երգեմ գրչով ջահել, սիրուս ծովը
 խո՞րն է այնքան,

Օ', վեհ վայրկյան, ես զգացի անհագ կարոտ
 և հիացում,
 Դու ինձ համար առաջնորդի էպոպեի
 դուռն ես բացում...

Ոչ մի պալատ պայծառաշուք, ոչ մի գլխակ
հոյակամար
Չեն լցնի իմ սիրտը ջահել այն ծով սիրով,
հուլզով անմար,
Ինչ ըմպեցի երջանկովթյան ու բերկրաւքի
այն վեհ ժամին,
Ինչ զգացի քո տնակի այցելովթյան չքնաղ
պահին:

Դու ծնվել ես այս տնակում, տեսքով անշուք
 և հասարակ,
 Չեն զարդարել դորդերը վառ ձեր տնակի
 պատ ու հատակ,
 Չեն սպասել դայակները քո
 «անխռով լուսաբացին»
 Եվ մետաքսե քող չի քաշել մայրդ քո հին
 օրորոցին:

Չար է եղել աշխարհը, սև՝ բիրտ տերերի
կրնկի տակ,
Տառապել է ժողովուրդը լցված ցասամամբ մի
անհատակ,
Քանի՜ մանուկ, աղջիկ, տղա սրտում հուրը
ծով կարոտի,
Տենչացել են երջանկուժյան արևաշող
Առավոտին...

Անգին մայրըդ անհուն սիրով գգվել է քեզ ու
 փայփայել,
 Եվ քո անլույս մանկությունը իր երգերով է
 զարդարել,
 Տեսել է վիշտ, կարիք, զրկանք, հարուստների
 լուծն անարդար,
 Չարչարվել է օր ու գիշեր իր Սոսոյի
 բախտի համար:

Իավ-նանա է նա երգել օրորոցիդ թեքված
 սիրով,
 Ունկնդրել են մորդ երգին ձեր լեռները
 խոր գիշերով.
 «Քնիր բալիկ, իմ լավ Սոսո, մատաղ լինեմ
 ծով աչերիդ,
 Չէ՛, չի մնա աշխարհն էսպես՝ հավետ գերի
 հարուստներին»:

Ինչպես արծիվը ղեռներում թեփին տալով
 ճախրում է վեր,
 Այնպես էլ դու այս տնակից, առած ամուր,
 հզոր թևեր,
 Աշխարհ եկար ժողովրդի սերը սրտում
 արեվակեզ,
 Որ պալլարի ուղիներում, միլիոններին լույս
 պարգևես:

3

Ես ելնում եմ քո տնակից... Սիրո ծոփն է
 ծփում անտես,
 Երգն է ահա թառել շրթիս և իմ սրտում՝
 լուսե հանդես,

Կարծես շքեղ մի ծիածան հորիզոնից մինչ
 հորիզոն,
 Գորի քաղաքն է պարուրել իր շողերով վառ ու
 բոսոր:

Սյունաշարերն այս մարմարե, գրանիտե
 պատերը կուռ,
 Հյուսված չքնաղ հայրենիքիս ժողովրդի
 անմար սիրուց
 Եվ զարդարված քանդակներով ճերմակաթույր
 անդեղիտից,
 Պահպանում են տնակը քո, որպես ավանդ
 երջանկալից:

Եվ դարերը կգան կանցնեն, ժողովուրդը
 հավետ անմահ,
 Անափ սիրով կգուրգուրի քո տնակը այս
 հասարակ,
 Որտեղ մի օր դու ծնվեցիր, ճառագեցիր
 լուսավարար,
 Աշխարհ եկար որպես արև՝ ժողովրդի բախտի
 համար:

Եվ ես առած հազար թևեր ձայն եմ տալիս
 սիրով անհազ,
 — Քեզ բյո՛ւր ողջուն Առաջնորդի հայրենական
 Գորի քաղաք,
 Իսկ հայացքս հառած հեռուն՝ պայծառ կրեմլի
 լույս աստղերին,
 Գոչում եմ ես. — իմ սերը քեզ, իմ կյանքը քեզ,
 Մե՛ծ Ստալին:

ԵՐԳ ԺԱՄԱԳՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Ժամացույցս օր ու գիշեր
Երգ է ասում և բաբախում,
Ով գիտի նա ի՞նչ է հիշել,
Որ այսօր իմ սիրտն է բաղխում...
Եվ ամեն օր կյանքի ծովից,
Ժամանակի նման հավերժ,
Ցած են թափվում շունդալից
Ժամ ու վայրկյան ինչպես ջրվեժ:

Ո՛վ ժամացույց, որ դարեդար
Հարկերակիդ անդուլ երգով
Ժամն ես չափել և անդադար
Աներևույթ, հզոր ձեռքով՝
Քանի՞ գիշեր, քանի՞ ցերեկ
Երգն ես երգել ժամանակի,
Ե՛րբ են եղել ժամն ու րոպեն
Այսքան հուզիչ ու թանկագին:

Ասա՛ դու ինձ, ժամանակի
Շամբով անցած՝ անդուլ զինվոր,
Տեսե՛լ ես դու կյանք մի ուրիշ
Այսքան ազատ ու բախտավոր:
Եվ ասա՛ ինձ, որ քո երթով
Պիտի քայլես դեպ Ապագան,

Ե՛րբ են եղել ժամն ու րոպեն
Այսքան վեհ ու նվիրական:

Պատմիր գալիք մարդուն ջահել,
Ո՛վ ժամացույց, զարկով համառ,
Թե ինչպես ենք մենք կյանք կռել
Ժողովրդի բախտի համար,—
Եվ մեր դարից վառ ու անշեշ,
Որպես նվեր,— սիրով անգին,
Նա կգտնի զարկերիդ մեջ,
Ի՞նչ բոցավառ սիրտն ու հոգին:



ԻՄ ՏՂԱՅԻՆ, ՈՐ ՊԻՏԻ ԳԱ...

Ես չգիտեմ թե որ տարին
Պիտի մտնես աշխարհն այս.
Խոզ այս երգը քեզ զարդարի,
Իմ լա՛վ տըղա, որ պիտի գաս...

Սև՝ կլինեն մազերը քո,
Թե՛ ծով աչեր դու կունենաս,
Միևնո՛ւյն է, հըզոր երգով,
Մի նոր երգով դու պիտի գաս:

Ծաղիկներով ծով երանգի
Կզարդարեմ օրոցքը քո,
Խնդիրք կանեմ ես լուսնյակին
Քեզ օրորի անուշ երգով:

Եվ ոչ մի օր դու չես տխրի,
Այնքա՛ն բարիք դու կունենաս,
Որ քո մորը՝ մեր աշխարհին
Երախտապարտ դու կըմնաս:

Քեզ կըսիրեն ջուր ու ծաղիկ,
Երկինք ու ծով, լույսն անհասնում,
Քեզ կսիրի մայրըդ, բալիկ,
Եվ ես, որ այս երգն եմ գրում:

Քեզ կըսիրի սիրով անկեղծ
Աշխարհըն իմ, հողն հայրենի,
Եվ մեկ էլ նա՛, նա՛ — մարդը մեծ,
Որ փայփայում է բոլորին:

Ու երբ ծնվես, արևը քեզ
Գուցե թըվա մի խաղալիք,
Իսկ երկնքի անհունն անտես
Հրաշք մի աչք, հեքիաթ խալի...

Այդ չգիտեմ,
Միայն գիտեմ, որ դու ինձ պես
Պիտի սիրես աշխարհըն այս,
Եվ քո սրտում ինչ որ ունես —
Քո մայր հողին դու պիտի տաս...

ԿՈՄԵՐԻՏՄԵՆՏԱՆԸ

Ուր էլ հասնեմ ես քոնն եմ,
Քո զավակը անտրտում,
Նոր աշխարհը կերտողն եմ,
Քո վառ սերը իմ սրտում:

Քո վառ սերը թանկագին
Փարոսի պես բոցավառ
Նորափթիթ իմ երգին
Լո՛ւյս է տալու անդադար:

ՄԵՐ ԱՍՏՂԸ

1

Իմ մանկության ոսկեծիծաղ օրերին,
Ես լսել եմ բյուր հեքիաթներ անհամար,
Թե անսահման, անծիր ծովում երկնային,
Ամեն մի մարդ մի աստղ ունի բոցավառ,
Երբ այդ աստղը առկայծում էր ու մարում,
Կորչում այդպես անհիշատակ և անհետ,
Ասում էին— «այդ ո՞ւմ աստղն է խավարում,
Ո՞վ մահացավ, մարեց իրեն աստղի հետ»:
Ես մի մանուկ տենչանքներով անհատակ,
Հեքիաթային այդ պատրանքը իմ հոգում,
Թափառեցի հոգով աշխարհն կապուտակ,
Բայց չգտա ես իմ աստղը երկնքում:
Հարցում արի պանա՛վ տատիս գլխիկոր.
— Ո՞ւր է տատի աստղս այսքան ժամանակ,—
Նա թե— «բա՛լե՛ս, դու չես տեսնի ոչ մի օր,
Նա շողում է քեզնից հեռո՛ւ և մենակ»:

2

Անցա՛ն օրեր... Անցան մշուշ և պատրանք,
Բայց ես գտա իմ լույս աստղը փայլփրփուն,
Գտա ո՛չ թե անհուն երկնում կապուտակ,
Այլ երջանիկ սովետական աշխարհում:

Հայրենիքիս հրաշագեղ երկնի տակ,
 Լուսապարար ու շենքերով վիթխարի
 Կա հոյակապ ու սրբազան մի քաղաք,
 Որ կյանք ու շող է պարգևում աշխարհին:
 Եվ հայացքս դեպի հեռուն լուսավոր,
 Ուր Մոսկվան է հաղարաթե տարածված,
 Ես տեսնում եմ լույս Կրեմլի փառավոր
 Աշտարակի կարմիր աստղը երկնամբարձ:
 Արեգակի նման պայծառ ու շքեղ
 Նա մեր հոգին խնդովյամբ է ողողում.
 Հաղթանակի անշեջ հուրն է, որ այնտեղ՝
 Այն բարձունքում լույս է տալիս ու շողում:
 Եվ նայում եմ երջանկովյամբ լուսաբեր
 Ես Կրեմլի աշտարակին անդադար,
 — Այդ ի՛մ աստղն է և ձե՛ր աստղը, քնկերնե՛ր,
 Որ շողում է և կշողա՝ դարեդար...

ՏԱՂ ԳՐՎԱԾ ԶԱՀԵԼՈՒԹՅԱՆ ՇԵՄԲԵՆ

Էն մեր սարերի ջրերը կայտառ
 Եկել են-անցել,
 Անցել և հովիտ, և դաշտ, և անտառ,
 Բայց չե՛մ մոռացել:
 Չե՛մ մոռացել ես սառն աղբյուրները
 Հստակ ու մաքուր,—
 Է՛յ դուք մանկության շողշողուն օրեր,
 Ո՛ւր սահեցիք, ո՛ւր...
 Գետակի ափին կանաչ ուռենին
 Աչքերն է թացել.
 Էն մեր ծառերի հասակը նրբին
 Ես չե՛մ մոռացել:
 Սակայն տրամուլթյան երգը չի հնչում
 Իմ ջահել սրտում,
 Անցած օրերի հուշը չի կանչում
 Եվ ինձ մորմոքում:
 Իմ լույս մանկության աղբյուրները ջինջ,
 Զրերը մաքուր,
 Միշտ խոխոջելով հոսո՞ւմ են աննինջ
 Իմ ամեն երգում...

ՔԱՆԻ՜-ՔԱՆԻ ԳՍՐՈՒՆ ԱՆՅԵԼ...

Քանի՜-քանի գարուն անցել,
Քանի անգամ վարդն է բացվել,
Եվ իմ գլխին՝ որպես թիթեռ
Թափել առատ վարդի թերթեր...

Ծաղկափթիթ մեր լույս կյանքի
Սերը անհուն, չքնաղ ու պերճ
Բյուր սերմեր է թաղել անգին
Մանկությունից իմ սրտի մեջ:

Սակայն նրանք չեն մոռացվել
Կյանք են առել ու բարձրացել,
Տեսե՛ք, ահա երգիս հողում,
Նրանց ծլած ծառն է շողում..

ԼԻՈՒԹՅԱՆ ԵՐԳ

Անցնում եմ ահա մեր լայն դաշտերով,
Արեվն է շողում երկնի կապույտից,
Եվ թևավորված հազար իղձերով
Ծփում է սիրտս սիրույց, կարոտից:

Լսում եմ հասկի շշուկն հարազատ
Եվ արոտների սոսափյունը մեղմ,
— Հայրենի՜ երկիր, հո՞ղ դու իմ ազատ,
Քո շունչն եմ զգում, քո բույրն ամեն տեղ:

Ազատ կոլվորի երգն է զրնգում,
Նման գետակի անուշ կարկաչին,
Նրկի՛ր, հանդես է ամենքի հողում,
Դու կյանք ես տալիս ամեն բողբոջին:

Արձակ դաշտերի այս լիության մեջ,
Ուր երջանկության ծաղիկն է ծաղկում,
Հասուն հասկերն են օրորվում անվերջ
Եվ մեր լույս կյանքի հմայքն են երգում:

Երկինքը պայծառ— կապել է կամար
Շե՛ն է աշխարհն իմ, հզոր ու ջահել,
— Շողա՛, լույս սփռիր, դու հավիտ անմար,
Մեր սովետական կենսատու արև:

ԼՍԻՐ ԻՆՁ, ԸՆԿԵԼ՝...

Լսի՛ր ինձ, ընկեր, ամեն առավոտ,
Երբ մանուկների խմբերն եմ տեսնում,
Իմ սրտի հովտում, որպես լույս կարոտ,
Հազար անթառամ վարդեր են բսնում:

Պատվի՛ առ, ընկեր, նրանց անհատնում
Եվ հրաշագեղ շարքերի առաջ,
Որոնց շողշողուն բյուր օջախներում
Երբեք չես լսի կսկիծ ու հառաչ:

Նրանք դեռ այսօր տուններն են դալար
Սերմերը հզոր, վսեմ գալիքի,
Վաղը կըլցնեն մրգերով հազար
Մեր սովետական արեշող այգին:

Ահա թե ինչու ամեն առավոտ,
Երբ մանուկների խմբերն եմ տեսնում,
Իմ սրտի հովտում, որպես լույս կարոտ,
Հազար անթառամ վարդեր են բսնում:

ԽԱՂԱ Ա՛ԻԵԼ...

Играй Адель, не знай печали..

А. Пушкин

Խաղա՛ Ադել
Այդպես թեթև.
Գարնան անծայր
Սիրով սլայծառ
Լցրու հագիդ,
Եղի՛ր թեթեւ:
Սիրի՛ր Ադել
Ծով կյանքը մեր,
Անափ հույսով,
Անմար լույսով,
Լույս երեսով,—
Խաղա՛ Ադել:

ՀՈՒՇԱՐՉՍՆԷ

... Խասանի մարտերի օրջանում
հուշարձան կանգնեցնել:
(ՍՍՈՒՄ Գերագույն Սովնետի
նախագահության հրամանագրից)

Չեմ երազել ճոխ դղյակներ
Հրաշագեղ քանդակներով,
Չեմ երազել մարմար սյուների
Ոսկե բաշով առյուծների,
Քիչ է անգամ գեղեցկատես
Վեներան իր հրապույրով,
Կամ չխամրող փայլն ու շուքը
Ոսկեգանգուր արձանների:

Բայց կա մե'կը... Նա', որ հպարտ
Պետք է կանգնի դեմն հողմերի,
Սպարտակի կուռ կեցվածքով,
Ինչպես Իլիան դյուցազնական,
Բարձր ու անբիծ, ինչպես արև,
Ինչպես դրոշ անպարտելի,
Նա, որ կապրի իմ սրտի մեջ
Արյան նման իմ սեփական:

Նա պիտ կանգնի հպարտ ու վեհ,
Քան լվերեստը երկնահեծ,
Գոռ հայացքը հառած զգաստ

Խաղաղական գորշ ջրերին,
Որպես արթուն, անվախ զինվոր,
Որպես դյուցազն արի ու մեծ,
Որպես հզոր պատվո պահակ
Սովետական սահմանների:

Ոչ մի մրրիկ ոչ մի ափից
Ձի' սասանի հիմքը նրա,
Չէ՞ որ այնտեղ կտրոփեն
Հուր սրտերը հերոսների,
Որոնք ընկան հայրենիքի
Սերը հոգում, բայց չմեռան,
Որոնք այժմ անմահացած
Կյա՛նք են տալիս հուշարձանին:

Նա պիտ կանգնի գիշեր ու գոր,
Կայծակների խուրձն աչքերում,
Որպես ընկած հերոսների
Մի մոնումենտ արևալից,
Ու թե նորից վտանգ գուժի
Նա կքալի մեր սահմանում
Եվ կզոլա շար թշնամին
Նրա հզո՛ր ոտնաձայնից...

ՍԵՐԳԵՅ ԿԻՐՈՎ

1

Կիրո՛վ, անհուն մի կսկիծով,
Միլիոն սրտի ցավով խորին,
Դրոշների անթիվ մի ծով
Խոնարհում ենք գերեզմանիդ:

Կիրո՛վ, Կիրո՛վ, մեր թանկագին,
Անմահ դու մարդ, վառվող դո: սիրտ,
Կոմունիզմի կուռ բանակի
Դու ջահ անմար և անբասիր:

Դո՛ւ, լենինի գոռ քաղաքի
Հուր ղեկավար, փառք ու խնդում,
Դու արսենալ պայծառ խոսքի,
Վեհ մոնումենտ միլիոն սրտում:

Մեր Միլիոնիչ, դու մարդ անբիծ,
Դու տրիբուն ժողովրդի,
Քե՛զ ենք ձոնում մեր սրտերից
Նրդեր սիրո ու կարոտի:

Քայլում է վեր երկիրը մեր,
Երկիրը մեր մի լույս աշխարհ,
Օրը-օրին արևաբեր
Կյանքն է ծաղկում մարդու համար:

Ո՛վ կհասնի հավետ անմահ
Ժողովրդի ահեղ երթին,
Երբ միլիոնը մեկի նման
Հի՛մն է երգում Առաջնորդին:

Թեկուզ հիմա չկաս մեզ հետ,
(Նենգ էր, ստոր չար թշնամին),
Բայց մեզ հետ ես հավե՛րժ, հավե՛տ—
Մեր պայքարի ամեն ժամին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՍՍԱԿԱԿԻՅՆԵՐԻ ԵՐԳԸ

Մենք ծնվեցինք լուսաշող հաղթանակի
 գոռ ժամին,
 Երբ Ալրորան Նեվալի լույս ափերից որոտաց,
 Երբ փրկարար և հզոր Հոկտեմբերը աշխարհին
 Ավետեց մի երջանիկ, հավետ պայծառ
 լուսաբաց...
 Մենք ծնվեցինք երկունքի ահեղ ժամին,
 Հայրենի՛ք,
 Քեզ հետ մեկտեղ, անբաժան, նվիրական
 մի սիրով,
 Տարիների երթի հետ քո գրկի մեջ անառիկ,
 Գտանք գարո՞ւնը կյանքի, ազատություն
 անխռով:
 Քանի՞ մայիս վարդարեց ծաղիկներով
 մեր ճամբան,
 Քանի՞ գարուն ենք ըմպում աղբյուրներիդ
 ջուրը լույս,
 Մենք, բյուրավոր ջահելներ— հիմն ենք երգում
 մեր անմար—
 Փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ մեր կարմիր
 հոկտեմբերյան արշալույս:
 Ելած դաշտից, գյուղերից, գործարանից
 և հանքից,

Ճակատներիս՝ խնդովյան աստղեպսակ
 լուսածին,
 Գալի՛ս ենք մենք երջանիկ և վերջ չկա մեր
 երթին,
 Գալիս ենք մենք, Հոկտեմբե՛ր, քո փառահեղ
 հանդեսին:
 Եվ ծփում են շարքերում, դրոշները հարազատ,
 Օծված կարմիր քո հրով, քո արյունով սրբազան,
 Ձի՛ սասանի ոչ մի ուժ, մեր նոր ընթացքը
 հպարտ,
 Մեր նոր ընթացքը վսեմ— դեպի հզո՛ր
 Ապագան:

ԵՐԵՎԱՆԻՆԻՔ

Դրիգադուբովային, Ռասկովային և
Օսկայենկային—երեք հեռուստիոններն

Թո՛ւի՛ր, երգ իմ, թո՛ւի՛ր կատարներից-կատար,
Ինչպես նրանք թռան՝ երեք հերոսուհին,
Տար մեր սերը նրանց, հազար բարև դու տար,
Հազար արև դու տար մեր ջինջ լեռնաշխարհից:
Նա նայում եմ ահա, ձեր դեմքերին պայծառ,
Իմ հարազատ քույրեր, դուցազուններ արի,
Որ դարերում գալիք, հավետ անմահացաք,
Ինչպես հավե՛րժ է նա՝ փառքն իմ աշխարհի:
Նա ձեզ կրակ տվեց, տվեց կամք ու թիվեր,
Նա՛, արևը դարի, որ Կրեմլից պայծառ
Կյա՛նք է տալիս մարդուն, ուղիներ է հարթում
Իր հանճարի լույսով, իմաստով յամբ անծայր:
Արհամարհած մոլի գոռ տարերքը մթին,
Ամպրոպները ահեղ, վարագույրը մութի,
Դուք հարթեցիք ճամբան չքնաղ Առավուտի,
Դարձաք հերոս կամքի, արիության, ուժի:
Հայրենիքիս պայծառ, սուրբ անունը վսեմ
Ձեր թևերին տարաք դուք օդերեն ծովում,
Նա ձեզ փարոս դարձավ, անմար մի աստղ
լուսե,

Առաջնորդեց նա ձեզ— դեպի անծայր հեռուն:

Նվ երբ ծաղիկներով ետ կդառնաք կրկին
Դուք հարազատ Մոսկվա, Առաջնորդին այցի,
Ոչ փոթորի՛կն ահեղ, ոչ ամպե՛րը մթին,
Ոչ տարերքը մոլի, ոչ մառախուղն անծիր,
Ձե՛ն հանդգնի պատել վերադարձի ուղին,
Ծածկել արեգակը, կամ երկինքը բանտել:
Զե՛ որ տարերքը մութ պարտվեց հերոսներին
Նվ պարտվելով ահա խոնարհվում է ձեր դեմ:
Նա ականջ եմ դնում... Ահա լսում եմ ես,
Հզոր երգն է հնչում, կամարներն են թնդում,
Ժողովրդի սերը կարկաչում է դեպ ձեզ,
Իսկ Կրեմլում հայրը, Առաջնորդն է ժպտում:
Թո՛ւի՛ր, երգ իմ, թո՛ւի՛ր, կատարներից-կատար,
Ինչպես նրա՛նք թռան՝ երեք հերոսուհին,
Տար մեր սերը նրանց, մեր հույզերը դու տար,
Հազար արև՛ դու տար,
Հազար բարև՛ դու տար...

ՀՈՐ ՏԱՐԿԱ ԵՐԳ

Անցավ տարին զնգոցով՝ ժամանակի գիշեր մեծ,
Սակայն եկավ լուսեհրով արև ու շող նոր
տարին,

Նկատ որպէս ոսկե հյուր, մեր դռներից
մտաւ ներս՝

Սովետերով կյանք ու սեր սովետական
այ խարհին:

Տեսե՛ք, կամար է կապել ծիածանը խնդովյան,
Անդամ երկիրն քը ձմռան լույս է ցողում
սպիտակ,

Զարդարվել է երկիրը, փռել սեղան լիության,—
Տո՛ւն է, հանդե՛ս, ցնծություն ամեն մարդու
Հարկի տակ:

Բարո՛ւլ եկար նոր տարի, սիրո՛ւլ եկար նոր տարի,
Դու ոսկե հլուր՝ երջանիկ սովետական աշխարհի:

Քեզ տեսնում եմ բյուրաբյուր մանուկների
աչքերում,

Նրանց ուրախ դեմքերին, ինչպես գարուն մի հավերժ,

Քեզ տեսնո՞ւմ եմ ալեհեր, ծեր Զամբուլի
երգերով՝

Ջահէկների մշտավառ, հուր սրտերում արեկեղ:
Քեզ տեսնում եմ մեր հերոս օղաշուի սլացքում,
Արծրվային հայացքում՝ սահմանապահ

Մարտիկի,
Գիտնականի խոհերում, բանաստեղծի

տաղերում —
 Ձուլված ազատ իմ երկրին՝ սովետական
 աշխարհին:

Բարով եկար նոր տարի, դու բերկրանքի ծով
տարի,

Ազատ կյանքի ու երգի, ծաղկունքով լի նոր
տարի:

Եւ տեսնում եմ ճամբեքում՝ իմ հարազատ
աշխարհի,

Լուսավորված Ստալինի արեգական շողերով,
Հրաշագեղ մի ներկա՝ ավելի յուս մի գալիք,

Որ չի՛ տեսել ոչ մի մարդ դարերի մեջ
քալելով:—

Այդ երկիրն է ընթանում գազաթնկերից նոր
գազաթ,

Ամեն եկող նոր տարին բերում է նոր մի բարիք,
Գալիք ամեն փորձության՝ դեմ հանդիման

միշտ պատրաստ,
Մեր երկիրն է կանգնած վեճ, միշտ հզոր և

անառիկ:

Բարով եկար նոր տարի, կյանքի, սիրո ծով
տարի,

Դու երջանիկ լրաբեր՝ սովետական աշխարհի:

ԻՄ ԵՐԿՐԻ ՈՒԺԸ

Արևն ահա կապել կամար
 Շող է սփռում մեր աշխարհին,
 Ծով խնդովյան լույսն էլ անմար
 Իջել է մեր ջրին, հողին:
 Իսկ Կրեմլից մի Մեծ Արև
 Շունչ է տալիս անգամ մարդուն,
 Մտքով թռչում դեպի դարեր
 Միլիոնների ուղին հարթում:
 Թե՛վ է առնում մարդը անգին,
 Երբ շնչում է մեր աշխարհում,
 Երջանկովյան ծով է հողին,
 Սիրտը՝ պայծառ ծաղկած գարուն:
 Եվ Պամիրի լեռնաշխարհում,
 Ծովափերին Կասպիական,
 Ցուրտ Սիբիրի տալգաներում
 Եվ դաշտերում Ուկրաինական,
 Աբխազական պարտեզներում,
 Բալթիական ծովափերին,
 Սահման չկա անժիր, անհուն
 Հայրենիքիս բյուր երգերին:
 Եվ հնչում են աուլներում,
 Պատմում ուրախ կյանքի մասին,
 Դոմբրան, հարմոնն են գեղեցիկում
 Ղազախի և բելոռուսի:

Ուկրաինական արևածին,
 Ուրախ բանդուրն է կարկաչում,
 Դոնի վրա լուսաբացին
 Կազակների երգն է հնչում.
 — Հայրենի՛ հող, չկա՛ քեզ պես
 Ուրիշ երկիր շեն ու ազատ,
 Դու դուրգուրում, սնում ես մեզ,
 Դու մայր անգին ու հարազատ:
 Եվ տարածած թե՛վերն այսօր,
 Ժողովուրդը դյուցազնի պես,
 Գնում է հար՝ անհաղթ, հզոր
 Ինչպի դալիքն արևակեղ:
 Որքան էլ որ թշնամին մոլթ
 Ամպեր դիզի հորիզոնում,
 Եվ սևասիրտ, դարանամուտ
 Խլրտա իր շար բներում,
 Աստղերի պես, բա՛րձր ես, երկիր,
 Տիտանական մի ջահ լուսե,
 Կայծակնածին սուրը ձեռքիդ
 Անհաղթ ես դու, բարձր ու վսեմ,
 Որդիներդ արթուն, զգաստ,
 Հսկում են քո սահմաններին,
 Ծովերից-ծով կանգնած է հաղթ
 Կարմիր բանակն անպարտելի:
 Առաջնորդն է արծիվների
 Պողպատակերտ Կլիմ հսկան,
 Տիմոշենկոն քաջ ու արի,
 Բուդյոննին մեր հաստատակամ:
 Փա՛ռք քեզ, հզոր ու անսասան
 Ժողովրդի արթուն պահակ,

Դու մեզ ձուլված և անբաժան
Անպարտելի Կարմիր բանակ:



Արեւին ահա կապել կամար
Շող է սփռում մեր աշխարհին,
Ծով խնդուկյան լույսն էլ անմար
Իջել է մեր ջրին, հողին:
Իսկ Կրեմլից մի Մեծ Արև
Շունչ է տալիս ազատ մարդուն,
Մտքով թռչում դեպի դարեր
Նոր աշխարհի ուղին հարթում:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՕԴԱԶՈՒՆԵՐԻ ԵՐԳԸ

Եկ մեկտեղ, միշտ մեկտեղ ճախրենք վեր,
Սովառնա՛կ, հարազատ իմ ընկեր:

Ես մանկուց սիրել եմ, երազել
Արեւին հավասար սովառնել,
Երկնային կապույտում երգ հյուսել
Եվ ճախրել դեպի վե՛ր, դեպի վե՛ր:
Ես ջահե՛լ եմ հիմա, կոմերիտ,
Պարգևեց հայրենիքն ինձ թևեր,
Ասաց ինձ— միշտ սրտոտ, քաջ եղիր,
Եվ ճախրիր համարձակ դեպի վեր:

Եկ մեկտե՛ղ, սիրելիս, ճախրենք վեր,
Սովառնա՛կ, անբաժան իմ ընկեր:

Ուրախ է իմ հոգին և թեթև,
Հայրենի աշխարհում իմ ազատ,
Լա՛յն է մեր երկինքը կապուտակ,
Մեծ է մեր երկիրը հարազատ:
Սովառնում, ճախրում եմ ես վերում,
Ծովերով, սարերով, դաշտերով,
Արևի շողերն իմ աչքերում,
Աստղերի վառ կրակն իմ սրտում:

եկ մեկտեղ, անգի'ն իմ, ճախրենք վեր
Սավառնա'կ, մտերիմ իմ ընկեր:

Լսում եմ աղմուկը մոտորի,
Իմ սրտի զարկերն եմ ես լսում,
Եվ հասնել մեր խիզախ թռիչքին—
Արծիվն է ներքևում երազում:
Քո ուժով ես թևեր եմ առնում,
Մա'յր իմ լույս, հայրենի իմ երկիր,
Քո սիրով եմ բարձունք նվաճում,
Քեզանով է հպարտ իմ հոգին:

Սլացի'ր սիրելիս, ճախրենք վե'ր,
Սավառնա'կ, անբաժան իմ ընկեր:

Աղմկի'ր, պտտվի'ր, պրոպելլեր,
Սի'րտ իմ դու հրճվանքից միշտ ցնծա,
Ամեն մի մեր թռիչքն անվեհեր,
Բերում ենք Արեւիկն մենք ընծա:
Արեւիկն, որ Կրեմլից է ծագում,
Արեւիկն՝ Ստա'լինին հարազատ,
Որ ապրում է հավետ մեր հոգում,
Որ կյանքն է, որ սերն է լուսառատ:

Թեվի'ն տուր, վե'ր սուրա, ճախրենք վե'ր,
Սավառնա'կ, դու խիզախ իմ ընկեր:

Իսկ թե մուժ ամպերը կուտակվեն,
Եթե սև թշնամին մահ գութի,
Կենենք վեր մենք խիզախ, անձնվեր,
Կսարսի թշնամին մեր ուժից:
Պատրաստ ենք քո կոչին, Առաջնորդ,

Որդիքդ անբաժան քեզսնից,
Զի' առնի թշնամին ոչ մի որ
Ոչ մի թիզ մեր ազատ երկնքից:

է'յ, պատրաստ սիրելիս, ճախրենք վե'ր,
Սավառնա'կ, մարտական իմ ընկեր:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԲԱԺԱԿԱՆՃԱՌ

Բարեկամանե՛ր, մոտ է ընկնի,
 Անցա՛յլ տարին գիրկն անհունի
 Քանի՞ սրտեր կտրոփեն
 Ասե՛ք, այս վեհ ուրախ ժամին:
 Պատվավոր է երգչի համար
 Այս նոր տարվա սեղանի շուրջ
 Բացել սիրտն իր՝ խոսքով արդար,
 Հյուսել սիրտ մի ծաղկեփունջ:
 Բայց և դժվար է չափազանց
 Ձեր խոսքի հետ մրցել այսօր,
 Երբ հրճվանքը գետ է անանց,
 Իսկ ձեր երգը խորունկ մի ծով,
 Երբ հայացքի մեջ ամենքի
 Եվ շողացող զույգ աչքերում,
 Ես նոր տարվա վսեմ երգի
 Հրաշք աղբյուրն եմ նշմարում...
 Ինչպե՞ս երգել, բարեկամանե՛ր,
 Այս բերկրանքի ուրախ ժամին,
 Երբ շող գինին երգ է դառել,
 Իսկ բոց երգը՝ կարմիր գինի:
 Ինքը մուսան եթե իջնե՛ր,
 Շնորհ աներ այս սեղանին,
 Գուցե պարտված երգը զիջեր
 Ուրախութեանը բուրբի...

Իսկ ես ահա առած քնար,
 Դարձած կաթիլն այդ ծով հուլի,
 Մի խոսք ունեմ մեր նոր տարվա
 Երջանկաշող արշալույսին:
 Բարեկանե՛ր, կենացը միշտ
 Բա՛րձր է հնչում մեր աշխարհում,
 Քանզի կենա՛ցն է միշտ անվիշտ
 Ուրախութեան մեր այս դարում:
 Խմում եմ ես կյանքի համար,
 Ծիլ ու ծաղկի, բերքի համար,
 Խմում՝ որ միշտ ծիծաղն անմար
 Մանկանց դեմքին կապի կամար.
 Խմում սիրով մեր ծովերի,
 Մեր լեռների գովքի համար,
 Խմում անուշ մեր հայրերի,
 Մեր մայրերի կենացն արդար.
 Խմում եմ ես կենացն երգի,
 Որ լույս կենացն է ամենքի:
 Աղջիկների կենացն եմ ես
 Խմում սրտով կարոտակեղ:
 Խմում եմ ես իմ սիրուհու
 Զերմ համբույրի կենացը վառ,
 Ով որ կուզե թող դատարկի
 Ամեն սրտում իրեն համար:
 Խմում եմ ես իմ հայրենի
 Հզոր երկրի անմահութեան
 Կենացը պարզ,
 Որ կենացն է մեր լիութեան:
 Եվ ես առած բաժակն այս,
 Լցրած գինով սիրտ-սափորից,
 Խմում եմ այն կենացը պարզ,

Որ բա՛րձր է ողջ կենացն երից,
Խմում եմ ես Առաջնորդի՝
Մեր ծով, անափ երջանկության
Կենացը հուր— անմարելի,
Որ կենա՛ցն է հավերժության:

ՌԱԴԻՈ ԿՈՄԻՆՏԵՐՆ

1

Այսօր ռադիո ընդունիչ է կարծես հոգիս,
Ես եթերում կայաններն եմ ահա որսում,
Ջայնակցում եմ ալիքների հզոր երգին,
Մտքով շրջում հողազնդի ամեն մասում...

Հողմի ձայնն եմ լսում Ալպյան լեռնաշխարհում,
Բալկաններից մռայլ երգի ձայնն է գալիս,
Եվ կարծես թե հայացքիս դեմ Արևմուտքում
Խոլ Ատլանտյան օվկիանոսն է լափին տալիս:

Իմ աշխարհի սահմաններից այն կողմ մթին
Թատերաբեմն է ծավալվում ոճիրներով,
Արեւլն անգամ զոհ է կարծես մայրամուտին,
Ներկված հազար աղնիվ մարդկանց թարմ
արյունով:

Արևելքում թող Արակին շուկա հանի
Սրբապղծված իր՝ Արեւլի աստվածուհուն,
Թող գիտենա գալը զանամ որ Չին կուլին
Չի՛ տա հողը իր հայրենի նենգ թշնամուն:

Մռայլ են խիստ սպաները ու թունալից,
Արնոտ ցարի ժառանգները մեռնող, չնչին,

Ես լսում եմ շվայտ կաֆե-շանտաններից
Պոլոնեզի և կադրիլի ճիշդ վերջին:

Քրիտանական ծեր առյուծն է այնտեղ փնչում,
Այն Լոնդոնն է իր մշուշոտ, գորշ ամիերից
Իր վաղեմի երգը երգում և անըրջում
Համեղ պատառ աշխարհների բաժանումից:

Երգն եմ լսում անգլիական դոկերների,—
Տե՛ս, Չապեից հրդեհներն են ճամբա հարթում,
Դեռ բազուկը իսպանական Տորեադորի
Արնածարավ ցուլի գլխին կիջնի հատու:

Ես լսում եմ Եվրոպայի կայանների
Երգը խռպոտ, մահամերձի վերջին ճիշով,
Դիզվում են տես, խմբերը բյուր գոռ ամպերի՝
Հղի հզոր ամպրոպների ահեղ կանչով:

2

Այսօր ուղիղ ընդունիչ է կարծես հոգիս,
Ծով եթերում ձայնում են բյուր կայանները,
Մոտ է սակայն և հարազատ միայն սրտիս
Հզոր Ռադիո Կոմինտե՛րնը:

Եվ ճախրում է միտքս ազատ դեպի հեռուն,
Գալիք կյանքի ամիերը հուր արեւավառ,
Ապագայի հեռաստանն է հոգիս գերում
Եվ տեսնում եմ մեր գնդերի երթը պայծառ...

Կգա՛ օրը... կսավառնեն երկրի վրա
Ալիքները Կոմինտեռնի մի նոր երգով,

Ազատ մարդու արև խոսքը կհնչի հուրա
Եվ կհնչի տիեզերքի ողջ երկայնքով:

.
.

— Միլիոնների՛ն, միլիոնների՛ն, ովքեր խնդում
Ծածանել են որպես դրոշ սրտերն իրենց,
Ով գալիքի ե՛րգն է երգել հպարտ ու մեծ,
Լսե՛ք, լսե՛ք Կարմիր Մոսկվան է հաղորդում:

Հողագտնողը ազատ է հար, ծնված նորից,
Աշխատավոր մարդն է իրեն կյանքի տերը,
Խոսում է նոր, լույս աշխարհի հզոր սրտից—
Կարմիր Ռադիո-Կոմինտեռնը:

ՄԻ ԿԱԹԻԼ ԵՍ ԼԻՆԵԻ...

Այս գետի մեջ մի կաթիլ,
Մի կաթիլ՝ էս լինեի,
Կյանքի ուրախ մեր ափից—
Գեթ կաթիլ՝ էս լինեի,
Ժամանակի հորդահոս
Ալիքներն ինձ տանեին,
Տանեին ու հանձնեին
Հրաշք ու նոր աշխարհին,
Երազ ու նոր աշխարհին,
Որ տեսնեի մի վայրկյան
Դարերի ի'դձը անշեշ:
Անեանար թող Ժամ՝
Կյանքս այդ նո՛ր գետի մեջ:



ԲԵՌԻՓԵՍԷՆ ԵՐԳԵՐ

✓ ԱՅՍ ԱՌԱՎՈՏ

Ահա բացվեց անուշ լույսով այս առավոտ,
Այս առավոտ ոսկե արև ինձ ծիծաղեց,
Սիրտս ծփաց, հոգիս զգաց անծիր կարոտ,
Ո՛հ, ինչ քաղցր էս լուսափրփուր իմ առավոտ:

Պատուհանիս դեմ հանդիման՝ մի վառ երկինք,
Տենչանքի պես խորունկ ու վես, հո՛ւր առավոտ,
Դո՛ւ էս ժպտում լուսե շրթով ջահել սրտիս,
Իմ սիրածի ծով աչքերի լո՛ւյս առավոտ:

✓ ԱՄՊԵՐԻ ՀԵՏ

Тучки небесные, вечные странники!..
М. Лермонтов

Այդպես թեթև, դուք միշտ թեթև,
Ինչպես վճիռ մաքուր եթեր,
Բազմած երկնի կապույտ գահին
Շո՛ղն եք ծծում արեվային.
Եվ անսահման լազուրի մեջ
Լողում հանդարտ, անխո՞ս, անվե՛րջ:

Երբ նայում եմ ձեր նուրբ ու հեզ
Լույս թելերին կարապի պես,
Խորհրդավոր մի ջինջ անդորր
Համակում է ինձ ամեն օր:
Եվ տենչում եմ ահա ձեզ պես
Դեպի կապո՞ւյտն արևհանդես...

✓ ՍՈՍԻՆԵՐԸ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

(Պեյզաժ)

Սըվսըվում են սոսիները
Սուախ՛կ-փուախ՛կ,
Սոսիները երազում են
Առվի եզրին,
Ի՞նչ են ասում, ի՞նչ են խոսում
Այս մութլուսին,—
— Սս՛ս...սս՛ս,—լսում եմ երգը նրանց,
Բայց ո՞ւմ մասին:

Սիրուն սոսիք, նազող ծառեր,
Նրանց ձայնն է,
Շշնջում են այդպես հուշիկ
Արշալույսին,
Տերեները փրսփրսում են
Ի՞նչ անուշ է,
Փրսփրսում են, ողջունում են
Բացվող լույսին,—
Սոսիները՝ բացվող լույսին—
— Սո՛ւա-ս՛ս,— խոսում են
Սիրո մասին...

ԾՈՎԱՓԻՆ

Խոր մանկությունից երազել եմ ես—
Ունդրել ծովի խոլական երգին,
Անծայր ջրերի ծփանքների պես
Ծով իմաստությամբ լցնել իմ հոգին:

Ծփում է ծովը... Ծփում՝ տարածված,
Նայում ափերին— անվրդով, խաղաղ,
Եվ արեւծագի կարոտով վառված
Շողում բազմերանդ և լուսաշաղախ:

Եվ թե՛վ է առնում իմ փնտռող հոգին
Այս կապույտ ծովի անվրդով ափին
Ու թվում է ինձ՝ երգերիս վրա
Իջնում է պայծառ, նրբակերտ արփին:
Եվ ճերմակածին ծովահավի պես
Թռչում է հոգիս անհուն ոլորտում՝
Ազատ, անվեհեր և արեւակեզ—
Ա՛յն ծովի վրա,
Լա՛յն ծովի վրա...

ՈՒՐԱԽ ՊԱՏԿԵՐ

Ես քայլում եմ դաշտի միջով,
Շուրջս ծաղկանց չքնաղ մի ծով,
Ծաղկանց մի ծով— շուշան, կակաչ,
Եվ զմրուխտյա անծայր կանաչ:
Այդ ծով դաշտի լուսե հզրին
Օրորվում է կանաչ լորին,
Սիրուն լորին՝ ծաղկած մի ծառ,
Արեւի տակ բորբ ու պայծառ:
Դաշտի միջին հովն է խաղում,
Հուր արեւը լույս է մաղում,
Ծաղկած դաշտում լույսի մի ծով—
Ես քայլում եմ դաշտի միջով...

Կրկին եկավ մայիս կարմիր պսակներով,
Այլ վարդերով եկավ, ծաղիկներով պես-պես,
Ուրախությամբ եկավ, եկավ հզոր երգով
Մեր սրտերում կրկին չքնաղ տոն է, հանդես...

Մայիս ծաղկահանդերձ, դու վա՛ռ գեղեցկուհի,
Դու թովչանքի, սիրո, աղբյուր լուսապայծառ,
Ես ծանոթ եմ քեզ հետ, քեզ սիրում եմ էլի,
Թե՛՛վ ես տալիս դու ինձ և սլացում անծայր:

Քեզ տեսնում եմ կրկին մեր լեռներում հպարտ,
Զքնաղ հայրենիքիս լուսե գագաթներին,
Քեզ տեսնում եմ դաշտում, այգիներում առատ,
Զուված ծաղիկներին, անտառներին, ջրին:

Դու շրջում ես ահա և վարդեր ես սփռում,
Մեր բյուր քաղաքներում, մեր գյուղերում
բազում,
Համայնական անափ, անափ մեր դաշտերում.
Ուր ամեն տեղ մարդիկ քո լույս գովքն են
ասում:

Սավառնում ես ահա հայրենիքիս վրա,
Թե՛՛վատարած որպես երջանկության ամիս,
Հայրենիքիս վրա, ուր շողում է ահա,
Հավերժակա՛ն դարուն, հավերժակա՛ն մայիս:

Զյունն է իջնում հանդարտ բյուրեղ փաթիլներով,
Բոցկլտում են ցածում լապտերները պայծառ,
Զյունն է իջնում երկնի հազա՛ր ճամբաներով,
Մեր դաշտերին, հողին, որպես շռայլ ընծա:
Շշնջում են սուսիկ անտառները ձմռան,
Գետակները հանդարտ ցուրտ քարերն են լիզում,
Նղեվինն է զուգվում նորահարսի նման,
Ճերմակաթուլը ձյունից չքնաղ պսակ հյուսում:
Փաթիլները լուսե, փաթիլները թեթև,
Այդ երկնային ծովի թիթեռները ճերմակ,
Լցնում են մեր հոգին մի կարոտով անթե՛վ,
Զմռան իրիկունի անուրջներով անհագ:
Օ՛, իրիկո՛ւն ձմռան, տեսի՛լք դու մարմարե,
Սիրո նման քաղցր, սիրո նման չքնաղ,
Թափի՛ր առատ, թափի՛ր բյուրեղներդ լուսե,
Մեր երջանիկ, խաղաղ կտուրների վրա...

ԱՄՊՐՈՊ

Люблю грозу в начале мая...
Ф. Тютчев

Ամպերն իջան և լեռները պատեցին,
էլ շեն փայլում գագաթները ձյունանիստ,
Ծառերը լուռ կատարները շարժեցին,
Մրմնջում է ծեր անտառը անհանգիստ:
Ահա դանդաղ, սակալն հաստատ քայլերով,
Ոնց երկնքի տիրակալներ անվախճան,
Մուժ ամպերը հավաքվեցին խմբերով
Եվ չքացան պատկերները դյուխական:
Հեռու, մոտիկ մուժ սարերի փեշերին
Խուլ մոնչաց փոթորիկը թեվալոր,
Թռան դողով տերևները ծառերի,
Եվ լացեցին առվակները բյուրավոր:
Պայթե՛ց երկնում գոռ ամպրոպըն ահավոր,
Կայծակները շողշողացին, փայլեցին,
Մուժ անտառում կաղնիները դարավոր
Դժկամությամբ գլուխները թեքեցին:
Եկնթ որոտաց հորիզոնը ամեհի,
Տաքնապ ապրող գաղանի պես մոնչաց
Եվ հեղեղը բարձունքներից երկնային
Հզոր թափով գահավիժեց դեպի ցած:

ԳԻՇԵՐԸ ՊԱՐՏԵԶՈՒՄ

Լուսնյակ գիշեր, անուշ գիշեր,
Ես քայլում եմ պարտեզում
Եվ իրիկվա մեղմիկ մի շեր
Շշնջում է, փսփսում:

Բյուր աստղերի շղթան պայծառ
Բազմաշողուն և անշեջ,
Մին թվում է հեռու, անծալր,
Մին զգում եմ սրտիս մեջ...

Եվ շրջում եմ հանգիստ, անձայն,
Ոնց անվրդով երազում,
Վերում լուսին, աստղեր պայծառ,
Խո՛ր լուռթյուն պարտեզում:

Իմ ջահել հոգին ինչպես մի թռչուն,
Միացած նրանց խելահեղ պարին,
Նրանց պես լազուր ավեր է տենչում,—
Ողջուն ավետում զարթնող աշխարհին:

✓ «ՍԵՎԱՆ» ՇՍ.Բ.ԲԻՑ

1

ՈՂՋՈՒՅՆ ՔԵՉ, ԼՃԱԿ...


Ողջո՛ւն քեզ լճակ, կապույտ օրորոց,
Ոսկեղեն երազ մանուկ օրերի,
Կրկին ես եկա քեզ այցելության,
Ահա քեզ մոտ եմ, քեզ մոտ եմ էլի.
Արեվածա՛գ է... Առավոտ պայծառ,
Երկնից հրեղեն անձրև է մաղում
Եվ արեգակի շողերն անհատնում
Համբուրում են քեզ, գգվում ու խաղում:
Քնքուշ ու թեթև հովիկն է փչում,
Հեռվում կորչում են լեռներ վիթխարի,
Մեղմ շշնջում ես, քեզ մոտ ես կանչում,
Սեվանա չքնաղ, ջինջ գեղեցկուհի:
Եվ լայն, անպարփակ, ծով բարձունքներում,
Քո լուսածիծաղ ջրերի վրա,
Ծովահավերը, ճալերն անհամար
Ճախրում են հպարտ, ողջունում իրար:

ՊԱՏՐԱՆՔ

Ճերմա՜կ ամպի պես,
Թեթե՜վ ամպի պես,
Լողամ ոսկեղէն
Քո երկինքներում,
Իջնեմ լեռներից—
Սահեմ դեպի քեզ
Եվ վրան խփեմ
Քո ջինջ ափերում...
Ճերմա՜կ ամպի պես,
Թեթե՜վ ամպի պես...

ԼՈՒՍՆՅԱԿ ԳԻՇՆՐ

Հեռու լեռներից կապույտ թևերով
Ահա ցած իջավ երեկոն էլի.—
Ծփում է խաղաղ— լիճը՝ հայելի...
Լուսնկա գիշեր, լուսնկա գիշեր,
Լճակի վրա լուսինն է իջել,
Երա՞զ է արդյոք, թե՛ լուկ հիացում,
Սևանա լճի ջինջ օրորոցում
Հազա՛ր աստղեր են փայլփլում,
նազում,
Ջրերը նրանց հեքիա՞թ են ասում...
Ահա այդ ժամին, գերված լճափնյա
Պայծառ գիշերվա հմայքով վսեմ,
Երբ լուռ ննջում են սարերըն անգամ,—
Անուշ կարոտով քնում եմ ես էլ:
Մինչև դիմացի լեռան քարափին
Լույս վրան խփի հրեղեն արփին:



ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՍԵՐ

ՈՉԻ՛Չ, ՈՉԻ՛Չ ՉԵՄ ՄՈՌԱՅԵԼ...

Օրերն անցան, տարի դարձան,
Կրկին սրտիս հարցում արի,
Սիրտս խոսեց զվարթաձայն,
Ինչպես լարերն իմ քնարի:

Ու սրտիս հետ զրուցելով
Տեսա սիրուդ դո՛ւն հմ բացել,
Ներս նայեցի կրկին սիրով
Տեսա— ոչի՛նչ չեմ մոռացել:

Ասի, սիրո՞ւն, ուր էլ գնամ,
Քո գերին հմ ես մնացել.
Ծաղկած մայիս... վարդն անթառամ...
Ոչի՛նչ, ոչի՛նչ չեմ մոռացել:

Էն անտառը, սաղարթը մովթ,
Էն գետակը հուշ են դարձել,
Բայց աչքերիդ ծովը կապույտ,
Չե՛մ մոռացել, չե՛մ մոռացել:

Գուցե ամենն մոռանալի,
(Ինչ անցել է, էլ չի դարձել),
Բայց, ո՛վ սիրուն, համբույրը քո,
Էսօրվա պես, չե՛մ մոռացել:

ՍԻՐՈՒ ԱԼԻՔ

... Եվ հեռացավ սերս ափից ինչպես ալիք,
Գնաց, կորավ ծովի կապույտ օրորոցում,
Անհացավ ջրերի ծով փրփուր ծոցում.—
Ու թվաց ինձ մի պահ ամբողջը խաղալիք:

Բայց իզուր ես, սի՛րտ, կշտամբում ինձ
զայրացած,

Սիրո ծովում ինչ հեռանա ետ է գալու,
Այդ ալիքը ուր էլ գնա հողմից քշված,
Կրկին սիրով իր ափերի՛ն է բախվելու:

ԿՂՋՈՒ ՍՆՐԷ

Գընում եմ, գալիս եմ, գընում եմ կրկին,
Սակայն միշտ քեզ մո՛տ է ջահել իմ հոգին,
Նավակը տանում է, նավակը բերում,
Բայց սերըս մընո՛ւմ է միշտ քո ափերում:

Արեւ է, անձրեւ է, ցերեկ է, գիշեր,
Ալյաց հետ որքա՛ն է նա ափը մաշել,—
— Լսո՛ւմ ես, ալա՛նջ դիր, կըղզու եղերքում
Ջարնվում է այսօ՛ր էլ, նույն երգն է երգում...

ԿԱՐՈՏ

Մեր սարերում մի լույս թռչնակ
Անձայն իջավ մի քարի,
Ոսկե կտցով, ոտքով բարակ,—
Ա՛խ, նման էր իմ յարին:

Բայց հենց հանդարտ ես մոտեցա
Թռչունը վե՛ր սլացավ,
Պտույտ տվեց անխոս, անձայն,
Սուզվեց երկնում, չքացավ:

Միայն մի վառ կարոտ մնաց
Փակված սրտիս վանդակում,
Էն թռչունը թռա՛վ, գնաց—
Խոր սուզվելով իմ հոգում...

Ո՛ՒՐ ԱՆՅԱՐ...

Սրտիս կապույտ երկնի մեջ
Գիսաստղի պես դու անցար,
Քո հայացքով վառ, անշեջ,
Ինձ դյուլեցիր— ո՛ւր անցար...

Սիրո ալրոդ քո երգով
Զգուշ, թեթև մոտեցար,
Այնպես քնքուշ, նազանքով՝
Եղնիկի պես լո՛ւռ անցար:

Սիրո՛ւն աղջիկ, շողացիր,
Որպես ալրոդ հուր անցար,
Ա՛խ, իմ սիրտը կիսեցիր՝
Որպես փայլող սո՛ւր անցար:

Օ՛, ՍԵ՛Վ ԱՁԵՐ...

Я очи знал,—о эти очи!

Ф. Тютчев

Խաղաղ էր իմ հոգին ջախել,
Ինչպես դարնան ջինջ առավոտ,
Էսօր նա մի հավք է դառել
Սեւ աչքերի ծովին կարոտ:
Ինչպես արփին կանաչ այգում
Շող գցեցիք դուք երբեք անդ,
Եվ ձեր սիրո կայծն իմ հոգում
Դարձավ լափող մի թեժ կրակ:

Օ՛, սե՛ւ աչեր, օ՛, սե՛ւ աչեր,
Ձեզնից ես ո՛ւր, ես ո՛ւր փախչեմ:

Նայում եմ ես— երկնում կարծես,
Էլ աստղ չկա, լուին խավար,
Դո՛ւք եք միայն ամենատես
Հայացքիս դեմ շողում համառ:
Կարծես խեղ եք աստղերի
Հավերժական հուրը անշեջ,
Սփռել ձեր լույս տեսքին գերի՝
Իմ սրտի մեջ, իմ հոգու մեջ:

Օ՛, սե՛ւ աչեր, օ՛, սե՛ւ աչեր,
Ձեզնից ես ո՛ւր, ես ո՛ւր փախչեմ:

Կախարդական օ՛, վեհ վայրկյան,
Հոգիների համր միացում,
Հավե՛րժ է, հար անդավաճան
Քո կրակը մարդկանց հոգում:
Բորբոքում ես այրող մի սեր,
Գգվանք անհուն, կյանք ու կարոտ,
Դու բացում ես հազար հույզեր,
Տենչանքների՛ նո՛ր առավոտ...

Օ՛, սե՛ւ աչեր, օ՛, սե՛ւ աչեր,
Էլ չե՛մ կարող ձեզնից փախչել:

Օ՛, սե՛ւլ աչե՛ր...

Я очи знал,—о эти очи!

Ф. Тютчев

Խաղաղ էր իմ հոգին ջահել,
Ինչպես զարնան ջինջ առավոտ,
Էսօր նա մի հավք է դառել
Սեւ աչքերի ծովին կարոտ:
Ինչպես արփին կանաչ այգում
Շող պեցիք դուք երբեք անգ,
Եվ ձեր սիրո կայծն իմ հոգում
Դարձավ լավոդ մի թեժ կրակ:

Օ՛, սե՛ւլ աչե՛ր, Օ՛, սե՛ւլ աչե՛ր,
Ձեզնից ես ո՛ւր, ես ո՛ւր փախչեմ:

Նայում եմ ես— երկնում կարծես,
Էլ աստղ չկա, լուին խավար,
Դո՛ւք եք միայն ամենատես
Հայացքիս դեմ շողում համառ:
Կարծես խլե՛լ եք աստղերի
Հավերժական հուրը անշեջ,
Սփռել ձեր լույս տեսքին գերի՝
Իմ սրտի մեջ, իմ հոգու մեջ:

Օ՛, սե՛ւլ աչե՛ր, Օ՛, սե՛ւլ աչե՛ր,
Ձեզնից ես ո՛ւր, ես ո՛ւր փախչեմ:

Կախարդական Օ՛, վեհ վայրկյան,
Հոգիների համր միացում,
Հավե՛րժ է, հար անդավաճան
Քո կրակը մարդկանց հոգում:
Բորբոքում ես այրող մի սեր,
Գլխանք անհուն, կյանք ու կարոտ,
Դու բացում ես հազա՛ր հույզեր,
Տենչանքների նո՛ր առավոտ...

Ս՛, սե՛ւլ աչե՛ր, Օ , սե՛ւլ աչե՛ր,
Էլ չե՛մ կարող ձեզնից փախչել:

ԵՂՋԵՐՈՒ

Լեռան ծայրին եղջերուն,
Պայծառ ցոլքն աչքերում,
Ո՛ւր է նայում այնպես հեզ,
Ինքը քնքուշ հովի պես:
Արդյոք ի՞նչ է նա տենչում,
Արդյոք ո՞ւմն է նա կանչում...
Թե՞ դյուրված է արևի
Իրիկնային շողերի
Լույս հմայքից չբացող—
Լեռնաշխարհին քուն բերող:

.
.

Մեկ էլ՝ նայեց նա հանկարծ,
Ապառաժից թռավ ցած,
Կորա՛վ հեռու ծմակում...
Ա՛խ, այդ կարոտն էր թաղում
Այն լուսավոր աղջկա,
Որ ապրում էր, բայց՝ չըկա:
Այն թուրուն եղջերուն—
Կարոտ ու սեր՝ աչքերում:

ՎԵՐՀՈՒՇ

Խորը գիշեր—
Մութ անթափանց,
Քաղցր է հիշել
Օրերն անցած:
Օրերն անցած
Մեր մանկության,
Օրերն անծայր
Ուրախության:
Պատմի՛ր, պատմի՛ր
Գիշերվա հյուր,
Անվերջ խոսիր,
Իմ քաղցր քույր...
Ինչպես այնտեղ
Գետի ափին,
Երբ ելնում էր
Պայծառ արփին,
Ձուկ են բռնել,
Ծրկու մանուկ,
Իրար սիրել
Սիրով ծածուկ:
Սակայն ինչպես
Սովերի պես
Օրերն անցան,
Թե՛ւն անձայն,—

էլ չդարձան...
Պատմի՛ր, պատմի՛ր
Գիշերվա հյուր,
Անվերջ խոսիւր
Իմ քաղցր քույր:

ԿԱՆԳ ԱՌ ՎԱՅՐԿԱՆ. ԷԼ ՄԻ՛ ԱՆՑԻՐ՝...

Սիրտս բացել աշխարհի դեմ, ինչպես՝ արփին—
շռայլածին,
Նստել եմ ես սիրածիս հետ, կա՛նգ առ
վայրկյան, էլ մի՛ անցիր:

էլ մի՛ անցիր, թող որ զգամ, հրանովթյան
ժամը վսեմ,
Աշխարհի մեջ— սերը անշեջ, կանգ առ
վայրկյան, էլ մի՛ անցիր:

Էս իրիկվան, վարդին կարոտ բլբուլն անգամ
կընախանձի,
Սիրող սրտին բլբուլն ի՞նչ, կանգ առ
վայրկյան, էլ մի՛ անցիր:

Առած աչքերն էն աստղերի, նայում եմ ես
իմ սիրածին,
Բայց հավատա, չե՛մ հագեցնում, կանգ առ
վայրկյան, էլ մի՛ անցիր:

Հազար գույնի ճոխ վարդերով նրա շուրջն եմ
ես զարդարել,
Քի՛չ է էլի, տունը ժամանակ, կանգ առ
վայրկյան, էլ մի՛ անցիր:

Տասը անուշ խոսք ասացի, նրա խոսքին՝
սիրտս կարոտ,
Ախ, հավատա, քիչ է էլի, կանգ առ
վայրկյան, էլ մի՛ անցիր:

Տասը այրող համբույր առա, համբույր տվի
իմ սիրածին,
— Քիչ է,— ասավ, սի՛րտ իմ, քիչ է, կանգ
առ վայրկյան, էլ մի՛ անցիր:

Էս իրիկուն կարծես տերն եմ հար զնդացող
տիեզերքի,
Հավերժ լինես հրաշք վայրկյան, էլ մի՛ անցիր,
էլ մի՛ անցիր:

ՀՐԱԺԵՇՏԻՑ ՀԵՑՈ

ՍԻՐՈ ՆՐԳԵՐ

1

Դուք ծաղիկներ սիրասուն,
Որ իմ կանաչ պարտիզում
Սիրո հեքիաթ էք ասում,—
Ո՞ւմն եք արդոք դուք հիշում...

2

Քո լուրթ աչքերն եմ կրկին տեսնում—
Ինչպես եթեր,
Կարծես հիմա էլ դու ես խոսում
նուրբ ու թեթև:
Կարծես հիմա էլ կանչում ես ինձ
Այնպես քնքուշ,
Դու բորբոքում ես ահա նորից
Մի այրող հուշ:
Քո վառ ժպիտն եմ տեսնում կրկին
Այնպես մաքուր,
Եվ փոթորկվում է ջահել հոգիս
Քե՛զ եմ երգում:
Ասա՛, կարող եմ ոնց երազում

Մոռանալ քեզ,
Ա՛խ, հենց աչերիդ ծովն եմ տեսնում՝
Այրվում եմ ես:

3

Քանի՛ երգեր դեռ կանցնեն,
Քանի՛ երգեր անորոտում,
Քանի՛ վարդեր կրացվեն
Բոցավառված իմ սրտում,
Բայց պատկերդ սնարիս
Նվիրական վարդի պես,
Չի թառամի և հոգիս
Միշտ կտենչա՝ դեպի քեզ:

Վառի՛ր, վառի՛ր լույսերդ,
Ինչպես ջահը մոգական,
Որքան թանկ է քո սերը,
Քո պատկերը դյուխական:

ԿԱՐՈՏԻ ԵՐԳ

Գիշեր է ուշ, աղջիկ անուշ, պիշերն արդեն
դառավ կես,
Սրտիս զարկերն եմ ես լսում, երգ եմ
գրում — հիշում քեզ:

Շրջանակից քո նկարի նայում ես լուռ և
անթարթ,
Շո՛ղ է սփռում, ինձ հմայում քո պատկերը
հարազատ:

Նայում եմ ես, աստղերը տե՛ս, խոր ու անտակ
երկնքից,
Բյուր աչերն են թարթում պայծառ —
համբույրներ են հղում ինձ:

Լուսնյակը լուռ, աստղերին՝ քույր, ոնց
դարավոր սիրահար,
Արծաթ լույսով, վառվող հույսով — շող է
սփռում անդադար:

Խոր ծփում է իմ կրծքի տակ սիրո լիճը
դյուխական,
Սեր ես խնդուն, բացվող սրտում, դու իմ
ծաղիկ աննման:

Շուրջս երկիրն արևակիր հագար լույսով
վառվռուն,
Մեզ պես քանի՞ ջահելների կյանք է տալիս,
գուրգուրում:

Երգի՛ր աղջիկ, մեր երջանիկ երկիրը մի
արեգակ,
Երգիր սերը, մեր հույզերը, որ ծաղկում է
կրծքի տակ:

Թող կարկաչի, թող զողանջի մեր նոր երգը
անտրտում,
Սեր ու վայելք, տենչանք ու երգ թող ծավալվի
մեր սրտում:

Քոչա Բիւսսակի

Արի՛, ե՛տ արի, լուսավոր աղջիկ,
Անցած մանկության իմ քնքուշ ընկեր,
Քո վառվող սերը եթեք չի հանգչի,
Իմ սեր, իմ երազ, իմ արև աղջիկ:
Տե՛ս, քանի՞ մանուկ, քանի՞ պատանի
Քալում են հաստատ երջանիկ դարում,
Մի ամբողջ սերունդ բախտավոր կյանքի
Ջահեր է վառել մեր նոր աշխարհում:
Արի՛, ե՛տ արի, արի կրկին տուն,
Ապրենք ու երգենք, քալենք միասին,
Չէ՛ որ հեռացար, խամբեցիր տրտում,
Կարոտ մնացիր մեր հզոր լույսին...
Արի՛, ե՛տ արի, արի կրկին տուն...

ՍԻՐՈՒ ԵՐԳԻ ԳՐՎԱԾ ԳՆԱԳՐՈՒՄ

Գնացքը թռչո՛ւմ է, գնացքը թռչո՛ւմ է,
Գնացքը թռչո՛ւմ է
Արձակ դաշտում,
Գնացքը տանո՛ւմ է, գնացքը տանո՛ւմ է,
Գնացքը տանո՛ւմ է
Ինձ դեպի տուն...

Ո՛ւր ես տանում դու, ո՛ւր ես տանում դու
Եվ սլանում դու,
Գնացք, կանգնի՛ր,
Այնտեղ թողել եմ, սիրո շողերն իմ,
Երգիս ցողերն իմ
Դե հանդարտվիր:

Լա՛յն է աշխարհն իմ, ծո՛ւլ է աշխարհն իմ,
Կյանքս խնդուն է,
Սերս՝ ազատ,
Ուր էլ գնամ ես, չե՛մ մոռանա քեզ,
Ոսկե աղջի՛կ իմ,
Իմ հարազատ:

Կյանքդ գարո՛ւն է, վարդի բուրում է,
Ինքդ մայի՛ս ես
Մի ծաղկավառ,

Իսկ ես երկրիս պես, ջահել, խնդո՛ւն եմ,
Իսկ ես գարնան մի՛ր
Խենթ սիրահար:

Եվ սա երազ չէ, չնչին պատրանք մի,
Հեռացումի կամ
Մորմոք մաշող,
Ես քեզ տեսնո՛ւմ եմ, ես քեզ զգո՛ւմ եմ
Միլիոնների մեջ
Արևաշող:

Կրկին երգում են այս անիվները
Եվ զույգ ուղևորներն են՝
Արձագանքում,
Կարծես նըրանք էլ այս ծով դաշտի մեջ
Սիրո անմար իմ
Երգն են երգում. —

— Քեզ մենք տանո՛ւմ ենք, մենք հեռանո՛ւմ
ենք,

Բայց մեր ամենի՛ն են
Ուր էլ գնանք,
Այսօր գնում ենք և հեռանում ենք,
Վաղը կրկի՛ն մենք
Ետ կըգառնանք...

ՅԵՐԵԿՆ ԱՆՅԱՎ՝ ԻՐԻԿՈՒՆ Է...

Յերեկն անցավ՝ իրիկուն է,
Կրկին քեզ հե՛տ եմ, սիրելի՛ս,
Սիրտս անգամ, տե՛ս, անքուն է
Քո ծով սիրուց, իմ սիրելիս:

Լսի՛ր անդին, ախ իզո՞ւր ես
Դու մեկ գնում, մեկ էլ գալիս,
Ա՛ռ բանալին, թե որ հյուր ես
Ու տե՛ր դարձի՛ր, ո՞վ սիրելիս:

ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՍԵՐ

Միշտ ասում են թե հավերժ ես,
Ո՞վ ժամանակ տիեզերքի,
Թե չե՛ս չափվի, միշտ անուժ է
Անհունիդ դեմ մարդու հոգին:
Ո՞վ ասավ, ո՞վ, սահող վայրկյան,
Ժամանակի չնչին հյուպե,
Ի՞նչ սառն ես միշտ, միշտ անկենդան,
Ինչպե՞ս սփինքսը մարմարե:
Էսօր նստած սիրուհու հետ
Ես չափվեցի քեզ հետ նորեն,
Եվ չիմացա թե ոնց անցար,
Ո՞վ ժամանակ, զրրնգալեն...
Ու միտք արի բաժանվելիս,
Չափեցի սերն իմն ու նրա,
Հիմա հպարտ հարց եմ տալիս—
— Դու կա՞ս արդյոք երկրի վրա:
Գուցե չ՛կաս, բայց չե՛ս մրցի,—
Սահման չունի սիրող հոգին,
Նա զորեղ է, հավերժ անծիր,
Քան անհունդ ժամանակի:



ԽԱՌՆԵՐԳԵՐ

ԱՍՏՂԱԽԱՂ

Քոռոս Բիւսաւսկի

Անհուն երկնքի ծով թեւերի տակ
 Ես երազեցի շղթան աստղերի
 Եվ մանուկ հոգու սիրով անհատակ՝
 Փարվեցի երկնի լազուր թեւերին:
 Բաց երկնքի տակ, խորը գիշերով
 Մի անծիր կարոտ լցրեց իմ հոգին
 Եվ հավերժական, խորունկ իղձերով
 Հյուր մնաց հոգիս անծիր երկնքին:

Մեր տան կտրանը ես ու քույրիկս
 Ափ-ափի տված, ապագա կյանքի
 Բյուր կարոտներով— բախտ էինք փորձում,
 Թե ո՞ր աստղիկը մերը կլինի.

Եվ միշտ Հրատն էր քույրիկիս ընկնում,
 Նա ծափ էր տալիս, ցնծում էր անվերջ,
 Չէ՞ որ Հրատն էր միշտ պայծառ փայլում
 Անհուն երկնքի բյուր աստղերի մեջ:
 Մթնում էր դեմքս խոր գիշերի պես,
 Չէի հասկանում դադտնիքն աստղերի
 Եվ միշտ աստղերի ծով հմայքը վես
 Իմ բացվող մտքին հանգիստ չէր տալիս:
 Բայց մի երեկո, երբ աստղախաղից
 Ապրում էինք մենք խորը ցնծություն,
 Ինձ ընկավ գիտե՞ք անհուն երկնքից
 Երկնի դիցուհի պայծառ Փայլածուն:
 Ծափ էի տալիս և ուրախ երգում
 Ես մեր կտրանը հրճվանքով լցված,—
 Իմ փնտրող հոգին հզոր երկնքում
 Գտե՛լ էր աստղը վաղուց երազած:
 — Դե տո՛ւն եկեք, տուն,— ձեր
 աստղախաղից,—
 Կանչում էր տատս, ձայնում քնելու,
 — Չէ, մի փոքր էլ կաց, տատի ջան, տատի,
 Տե՛ս մեր աստղերը ինչպես են փայլում:
 — Դուք շատ եք սիրում երկինք ու
 աստղեր,—

Ասաց տատիկս մի օր քնելիս,
 Էն երկնքի պես, բաւեք, սիրտը ձեր,
 Թող միշտ լայն, պայծառ ու ազատ լինի:

... Եվ այսպես անցած իմ ուրախության,
 Անցած մանկության օրերն հիշելիս,
 Որպես բերկրանքի մի լույս ծիածան—
 Մեր աստղախաղն է միշտ միտս գալիս:

ԿՏԱՆՔԻ ԳԱՐՈՏԸ

Ահա նստած խորհում եմ ես,
Մտքով՝ երգի մի անտառում,
Ծանոթ հանգով, թագուն ալնպես
Իմ երգերն են ինձ պաշարում:
Եվ ես կարծես մոռացումի
Անեզրական մի աշխարհում
Հանձնում եմ իմ դեկը նրանց
Ու էլ ոչինչ չեմ նշմարում:

Սակայն հանկարծ դողանջի պես
Իմ ականջին ալնպես թովիչ,
Պարզ ծիծաղի ձայն է հասնում
Պարզ, սրտաբաց, հստակ ու ջինջ:
Յատկում եմ վեր ես շտապով
Եվ սթափվում անտրջներից,
Մանկան նման թեթև հոգով
Դուրս եմ նայում պատուհանից:

Այնտեղ, ցածում՝ պողոտայով
Մանկանց ուրախ մի խումբ անցավ...
Նրա՞նք էին, որ հոգեթով
Անհոգ, կայտառ, զվարթաձայն,
Անցան թեթև, ինչպես դարնան
Ամպը կապույտ, ջինջ կամարից—

Եվ գերեզով ինձ դուրս տարան
Ծով երգերի թավ անտառից:

Այդպես է միշտ, իմ լավ երգեր,
Միք նեղանա դուք ինձանից,
Սիրում եմ ձեզ ես ավելի,
Քան սիրահուս աչքերը ջինջ:
Ես ապրում եմ, հրճվում ձեզնով,
Իմ գոյության ամեն ժամին.
Եվ փայփայում մի ջերմ սիրով
Ինչպես մայրն իր երեխային:

Բայց երբ մենակ, նստած ձեզ հետ,
Իմ լուսավոր պատուհանից
Հսում եմ ես դարնանաբեր
Մանկանց ծիծաղ երջանկալից,
Կամ մայիսյան վարդերի պես
Անուշ ե՛րգը աղջիկների,
Այն ժամ արդեն դառնում եմ ես
Այդ հանդեսի մանուկ գերին:

Դուրս եմ թռչում թեվեր առած,
Փողոցը լայն, աղմուկով լի,
Եվ միանում կյանքի հզոր
Այդ անսպառ խոլապարին:
Գերում են ինձ և տուն, և ծառ,
Եվ մայիսյան երկինքը լուրթ,
Ծծում եմ ես փուլած անծայր
Ծաղիկների բույրն անհագուրդ:

Թե՛վատարած, թե՛թե, ազատ
Յանկանում եմ գրկել մեկին,
Ասե՛լ— բացի՛ր, սիրտս դու մարդ,
Տես ինչպես է ցնծում հոգիս:
Եվ պարզում եմ արևի դեմ
Ես հույզերիս դրոշը վառ,
Գողում երգիս հետ միատեղ,—
Ողջո՛ւյն կյանքի հզոր անտառ:

ԻՍՊԱՆՈՒՀՈՒ ՕՐՈՐԸ

Գիշեր է, բալիկս, խավար դրսում,
Երկնում աստղերն են հեքիաթ ասում,
Քաղաքը ննջել է հիվանդի պես,
Իսկ ես արթուն եմ, հսկում եմ քեզ:
Դե սև աշերդ, բալիկ, փակիր,—
Քնի՛ր, Մարսելինո, քնի՛ր:

Ծովից փչում է սառը քամին,
Ծովը հուզվել է այս շար ժամին.
Թշնամին նենգ և արնախում,
Նա մեր աշխարհի դուռն է բաղխում,
Բայց մենք արթուն ենք, լաց մի լինիր,—
Քնի՛ր, Մարսելինո, քնի՛ր:

Ծովափից մի մեղմ ձայն է հնչում,
Այդ պահակներն են իրար կանչում,
Հայրդ, եղբայրդ մարտ գնացին,
Կռվում արի է իսպանացին,
Իսկ դու բալիկս հանդիստ ննջիր,—
Քնի՛ր, Մարսելինո, քնի՛ր:

Ծովից, լեռներից այն կողմ, բալիկ,
Մի լույս երկիր կա, մի ընտանիք,
Մարդիկ ուրախ են այնտեղ ջահել,

Եւ առաջնորդն է Ստալինն արեւ,
Նա քո մեծ հայրն է, նրան սիրիր,—
Քնի՛ր, Մարտեւինո, քնի՛ր:

Կըզա լույս օրը, ազատ կերպես,
Եւ մայր Իսպանիան կգրկի քեզ,
Այժմ ննջիր դու, որ մեծանաս,
Անխոռով քուն քեզ, անուշ երազ:
Մորդ խոսքերը դու լավ հիշիր,—
Քնի՛ր, Մարտեւինո, քնի՛ր:

ԵՐԿՈՒ ԵՐԳ

Վահան Տեւյանին

1

Ձըհասար ափսոս այս նոր օրերին,
Մնացիր հզոր արեւին կարոտ.
Ահա բացվել է գարունը նորից,
Ծաղկել են և դաշտ, և սար, և արոտ:
Սակայն դու չկաս, որ մեր արեւը
Շո՛ղ տա քեզ, լույս տա և կյանք պարգևի,
Որ գուգուրի քեզ մեր վառվող սերը
Եւ կրակն իջնի քո ցուրտ երգերին:

2

Տե՛ս, տարիների շարանի միջով
Իմ երգերի հետ,
Պարզում եմ ձեռքս մի անհուն սիրով
Ձեռքդ սեղմելու.
Սակայն զգում եմ նոր բռնկումի
Կայծը կար, պոետ,
Դալիքի շո՛ղ կար քո այդ տխրածոր,
Աշնան երգերում...

ՉԱՐՏԱՍՍԱՆՎԱԾ ԲԱԺԱԿԱՃԱՌ

Փոքրիկ Մերիկ

Խմենք ընկերներ այս պայծառ գինին,
Այս պայծառ գինին արծաթե թասով,
Խմենք, ողջունենք նորեկ մանուկին,—
Փոքրիկ աշիկին լուսե երեսով:

Ապա մի տեսեք նա ո՛նց է լալիս,
Փոքրիկ հերոսը, նոր քաղաքացին,
Բ՛նչ աղմուկով է նա աշխարհ գալիս,—
Երեսին շողը մեր լուսաբացի:

Շեփորն է հնչում մեր առաւելտի,
Արեւն է կապել հաղթության կամար
Եվ բյուր սրտերի սիրուց, կարոտից,
Պսա՛կ է հյուսվում մանուկի համար...

Խմենք ընկերներ այս պայծառ գինին,
Այս պայծառ գինին արծաթե թասով,
Խմենք, ողջունենք նորեկ մանուկին,
Փոքրիկ աշիկին լուսե երեսով:

ՔԱՅԼԵՆՔ ՄԵԿՏԵՂ...

(Կոմերիսական ֆայլերգ)

Քայլենք մեկտեղ ջահել ընկեր,
Մենք զավակներ նոր աշխարհի,
Սրտով պայծառ, շարքով անծայր,
Մենք նոր սերունդ արև դարի,
Արև դարի, գարուն դարի,
Մենք զավակներ նոր աշխարհի:

Հե՛յ կոմերիտ,
Խրոխտ քայլիր,
Բա՛րձր բռնիր
Դրոշը մեր,
Կանչի՛ր մեր երգ,
Կարկաշիր երգ,
Ողջ աշխարհում
Հնչի՛ր մեր երգ:

Մենք կոմերիտ հոգով անշեջ,
Միլիոն բանակ անպարտելի,
Ո՞վ է տեսել դարերի մեջ
Մեզ պես սերունդ քաջ ու արի:
Մեր քայլերից հողն է թնդում,
Կարնան բույրով կյանքն է խնդում:

Մեր մայր երկիր, քո որդիքն ենք,
Քո որդիքն ենք, քոնն ենք հավետ—
Եվ մեր սերը, մեր հույզերը
Մենք ձուլել ենք քո կյանքի հետ,
Քո կյանքի հետ, արևի հետ,
Ստալինի մեծ սրտի հետ:

Թող սավառնի երգը մեր լույս,
Թող թշնամին սարսի, դողա,
Ողջ աշխարհում փոթորկահույզ—
Մեր արևը պիտի շողա,
Պիտի շողա, փայլի հավետ,
Ժողովրդի ծով սրտի հետ:

Հե՛յ կոմերիտ,
Խրոխտ քայլիր,
Բա՛րձր բռնիր
Դրոշը մեր,
Կանչի՞ր մեր երգ,
Կարկաշիր երգ,
Ողջ աշխարհում
Հնչի՛ր մեր երգ:

ՎՍՍՍԱԿ

Բանասերդ րեկերոջս՝
Հովհաննես Շիրազի

Երբ ծանրացած անցած օրվա մտքերով
Ես գլխահակ անրջում եմ մութի մեջ,
Ինձ թվում է, թե իմ դալար երգերով
Անցած օրում ես թողել եմ մի նոր էջ:

Այդ վաստա՛կն է մեր հույզերի, մտքերի,
Աշխատանքի, մաքառումի ոսկեշող,—
Այդ այն քա՛րն է, որ դնում ենք հույսով լի
Երկրի ելնող ապարանքին լուսաշող:

Մեր սրտերը ձգտումներով անհամար,
Նոր աշխարհի լայն ճամբերում լուսառատ,
Խոր հավատով և տքնովթյամբ անդադար-
Ե՛վ հարուստ են, և՛ լեցուն են, և՛ առատ...

ԱՆՄԱՀ ՇՈՔԱՆ

Օ', Մեծ Շոթա, արե պայծառ, սիրո անհուն
 դու օվկյան,
 Դո՛ւ, դարերի ճամբա անցած երգիչ անմահ,
 դյութական,
 Արագվայի նման կայտառ և Քուռի պես
 հորդառատ —
 Ե՛րգդ է հոսում և ողողում խոսքի պարտեզն
 անթառամ:

Էլբրրուսի նման հպարտ, Կազբեկի պես
 վեհափառ,
 Ծո՛վ է, երգի՛չ, հմայքդ լույս և վաստակը
 քո արդար,
 Դու պատուեցիր հին աշխարհի խավարն
 անծիր ու անտակ
 Եվ փայլում ես Հայրենիքիս արևաշող երկնի
 տակ:

Որքան էլ որ չքնաղ լիներ վրաց Թամար
 թագուհին,
 Կաթիլ էր նա հոգուդ անհուն օվկյանի մեջ
 սիրով լի:

Դու սիրեցիր ժողովրդին, այնտեղ գտար
 հույզ ու սեր,
 Նա՛ է միայն քեզ գուրգուրել և ողջունի
 խոսք ասել:

Բա՛րձր ես, Շոթա՛, ժողովրդի բյուր
 սրտերում անբասիր,
 Ինչպես Պուշկինը հանճարեղ, ինչպես անմահ
 Ֆիրդուսին,
 Դու դարերի միջով անցար, հասար փառքի
 այս օրին,
 Հասար մինչև լույս պարտեզը սովետական
 աշխարհի:

Կապրեն հավետ հանճարները ժողովրդի
 հետ մեկտեղ,
 Կապրես և դու, օ', մե՛ծ երգիչ, Հայրենիքում
 մեր շքեղ,
 Ուր Ստալինի միտքը պայծառ նման հզոր
 օվկյանի,
 Երջանկության շող է սփռում, լույս է տալիս
 աշխարհին:

ԽՆՃՈՒՅՔ

Льется полночь в окно,
Льется песня с вином...
М. Светлов

Մութն է իշի վաղուց դրսում...
Եվ փայլում են վառ Մերկուրին,
Մարսը պայծառ.
Խոր գիշերը փարվել է լուռ
Անհուն երկնի ծով աստղերին
Հեռու, անծայր...

Ո՞վ է սփռել անտես ձեռքով՝
Այս հանդեսին մեր սրտերում
Այսքա՛ն աստղեր.
Կյա՛նքն է, կյա՛նքն է խորհուրդներով
Նոր ու վսեմ մեր խենթ հոգին
Բոցավառել:

— Է՛յ, նվագիր, երգի՛ր ընկեր,
Եվ լցրեցեք հուրհրատող
Թասերը ձեր,
— Է՛յ, դատարկենք բաժակը մեր,
Պարենք պարը՝ երգով լուսե,
Զարկով թեթեվ:

Զնգա՛ կիթառ, խփի՛ր լարին
Իմ կոմյերիտ ուրախ ընկեր,
Երգի՛ր, ցնծա՛,
Տե՛ս, երկինքը շառագունեց,
Շուտով արփին կբարձրանա՝
Երկրին ընծա:

ԾԻՄԵՌՆԱԿ

Առավոտյան — բացվող լույս,
 Առավոտյան — արշալույս,
 Գարնան չքնաղ առավոտ,
 Պայծառ արև, զուլալ օդ:

Մեր տանիքի ծածկի տակ
 Բուն հս դրել ծիծեռնակ,
 Ծի՛վ-ծի՛վ, ծի՛վ-ծի՛վ, ծիծեռնակ,
 Գարնան սիրուն իմ թռչնակ:

Հենց որ — այ էն մեծ սարին,
 Սարի բարձր կատարին
 Ես տեսնում եմ վառ արև,
 Նա ձայնում է «քեզ բարև»:

Զայն է տալիս ցնծալից,
 Դուրս է թռչում տանիքից,
 Ծափ է տալիս թեվերով,
 Սուրում զվարթ երգերով:

— Թռիր, սուրա մեր տան մոտ,
 Սեվիկ փետուր, քնքուշ ոտ,
 Դու կենսուրախ դարնան պես:
 Ողջո՞ւյն դարնան, ողջույն քեզ:

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԼՈՒՍԻՆՔ

1

Փոքրիկ տղան մի երեկո
 Զինջ անդորրը երեսին
 Լուռ քնած էր ծառի ներքո,
 Ինչպես չքնաղ մի լուսին:
 Հանկարծ սարի վեհ կատարից
 Լուսնյակն անուշ դուրս սահեց,
 Թուխ մանուկը հուզումնալից
 Իր մայրիկին մոտ կանչեց:
 — Մայրի՛կ, մայրի՛կ, մի վեր նայիր,
 էն լուսավոր գնդակին,
 Ինչքան լավն է, դե շո՛ւտ բռնիր,
 Ինչ լավ շորեր է հագին:
 — Ախր բալես, էդ լուսնյակն է
 Էդքան սիրուն ու պայծառ,
 Լուսնյակն հեռու երկնքումն է,
 Ես ո՞նց բերեմ քեզ ընծա:
 Նա գիշերը հյուսի է գալիս,
 Շրջում երկնում ամեն օր,
 Արծաթաշող լույս է տալիս,
 Երբ քնած են սար ու ձոր:
 Փոքրիկ տղան ափսոսանքով
 Նայեց հեռու լուսնյակին,

Սակայն էլի բոց երկնքով
Սովառնում էր լույս հոգին...

2

Քունը հաղթեց— քնեց տղան,
Իսկ լուսինը՝ երազում,
Նրան հրաշք, կախարդական
Ոսկե հեքիաթ էր ասում...
Եվ թվում էր այդ մանուկին,
Թե անսահման երկնքում,
Լույս-հրեղեն շորեր հագին
Ե՛վ խաղում է, և՛ երգում:
Վազվզում է էն հեռավոր
Գորգի վրա թանկագին,
Որ շուտ հասնի երազավոր,
Ջինջ ու փաքուր լուսնյակին:

ԽԻՉԱՆ ՄՐՐԿԱՆԱՎԸ

Եվ մրկահավը՝ նման սև ճանրի,
հայտն հայտնում է ծով ու ամպի մեջ:
Մ. Գորկի

Ես չսեղ եմ ծովի երգն ահեղաձայն,
Մութ ամպերը կիսող կայծակներն եմ տեսել,
Եվ իմ երգում հպարտ փռած թեփերն արձակ,
Այդ գոռ պահին քո վեհ մրրկահավն է ճախրել...
Նա լցրել է հոգիս անհուն ձգտումներով,
Քեզ եմ տեսել նրա թռիչքներում անծիր,
Քե՛զ, մարդկության տիտան, արև լուսադորով,
Խիզախ մրրկահավ, արիասիրտ արծիվ:
Այն սեականած, մռայլ, դաժան տարիներին,
Երբ երկիրն էր հեծում, վշտի մի ծով դարձած,
Դու բարձրացար ձուլված քո մայր ժողովրդին,
Նրան նվիրեցիր երգդ որոտաձայն:
Եվ քնարըդ հնչեց, քնարդ փոթորկածին,
Մաքառումի, կովի, լուսե փազաթներին,
Վառ հավատով լեցուն դու մահ գուլակեցիր
Կախաղանի, ոսկու, խաչի մագնատներին:
Եվ ճակատին քո վեհ հուրը մեր հաղթության,
Ժողովրդին ձուլված մտար մի նոր աշխարհ,
Ուր ճախրում է հպարտ արծիվն երջանկության—
Մեր ծովերի՞ վրա,
Մեր լեռների՞ վրա...

Եղար ազնիւ ու մեծ, Դանկոյի պես հզոր,
 Հավատարիմ՝ անմահ, Լենինյան վեհ խոսքին:
 Հոգով անհուն ու խոր երգով հրաբոսոր,
 Դու սիրեցիր անմար Ստալին արեգակին:
 Թշնամու դեմ եղար դու անսասան, անդող,
 Նրա թունոտ գլխին միշտ քո սուրն էր շողում,
 Չպետք է շունչ քաշի ոչ մի անարդ ոսոխ,
 Մեր սրբազան, մեր մեծ սովետական հողում:
 Իժը դարանամուտ, կյանքիդ թելը կտրեց,
 Բայց անդոր է, չնչին, նա քո ուժի դիմաց,
 Դու քայլում ես ահա կրկին անհաս ու մեծ,
 Դու լեզենդ ես դարձել, փարոս երկնասլաց:
 Զոհանձարը վսեմ շունի պատնեշ, սահման,
 Միլիոնների սրտում քո անունն է հնչում,
 Հավերժության պես խոր դու քայլում ես ահա,
 Սերունդներին ձուլված դեպի անմահություն...

Տե՛ս, երկիրը մեր շին, մի անթառամ այգի.
 Քանի ջահել սրտեր երջանկությամբ լեցուն
 Մի աշխարհ են կերտում՝ կյանքի, սիրո երգի,
 Ստալինյան առատ այս լույս ծաղկանոցում:
 Դու պայքարի ծովում մեր երկիրը ազատ,
 Հազար կրակ առած հազար արևներից,
 Քայլում է վեհ, հպարտ, իր տենչանքով...
Հաստատ,

Դեպի գալիքը լույս, պայծառ, երջանկալից:
 Եվ տիրաբար փռած իր թևերը բոսոր,
 Սովառնում է այսօր ողջ աշխարհի Պրա,
 Զո անունը պայծառ որպես արծիվ հզոր,
 Որպես հաղթանակի խիզա՛խ մրրկահավ...

ՈՂՋՈՒՅՆ ՔԵՂ ՊՈՆՏ...

Здравствуй племя младое, незнакомое...
 А. Пушкин

Ողջո՛ւյն քեզ պոետ, հզոր բանաստեղծ,
 Ազնիւ ներշնչման դու չքնաղ աղբյուր,
 Դո՛ւ, որ կանգնեցիր անխորտակ ու մեծ,—
 Խոսքի, երգերի անմահ տրուբադուր:
 Դու եղար արի քո պայծառ հոգով,
 Ատեցիր դաժան, գոռոզ արքային,
 Ընկար դու ցարի ոհմակի ձեռքով,
 Լույս ազատության մեծ ճանապարհին...

Ընկա՛վ նա... Սակայն ցարը սարսափեց
 Նրա վեհ երգի ներշնչման ուժից.
 — Դուրս տարեք թագուն, ծածուկ թաղեցեք,
 Թող հեռու մնա մարդկանց աչքերից:
 Եվ մի հունվարյան բքաշունչ գիշեր,
 Երբ Ռուսաստանի արձակ դաշտերում
 Թուքն էր գալարվում. և քաղաք, և շին
 Կուշ էին եկել քամու թևերում...
 Գորշ Պետերբուրգի մոայլ ամերից
 Դուրս եկավ թագուն եռաձի սահնակ,
 Իսկ դադաղի մոտ՝ մովթ, սպառնալից
 Չորս ոստիկանի դաժան կերպարանք:

Եվ երկու գիշեր, և ցերեկ երկու
Սահնակը սուրաց քամու ողբի տակ,
Փախցրին նրա դագաղը թագուն
Դեպի Պակուկյան դաշտերը արծակ...
Մութ Սվյատոգորի վանքի պատի տակ,
Խույ հեկեկանքով մինչև լուսաբաց
Չորս գյուղացիներ ցավով, գլխահակ,
Փորեցին նրա գերեզմանը թաց:
Եվ հողի արդար այդ մշակների
Մամունջը քամին թևերին առած,
Թռավ և գուժեց ի լուր աշխարհին.—
Հզոր պոետի կորուստը ողբաց:
Սակայն առավել փոթորկի ուժից
Մեծ ժողովրդի խոսքն ահեղաձայն
Բյուր անեծք կարգաց բռնակալ ցարին,
Նրա սև թագին, նրա տիրության:
— Չե՛ս կարող թաղել, արքա սևակիր,
Անմահ պոետի փառքը անհատնում,
Որի համբավը երկրից-երկիր
Պետք է սավառնի գալիք աշխարհում:

Ողջո՛ւյն քեզ պոետ, բանաստեղծ հզոր,
Որ բարձր եղար, հստակ, փառահեղ,
Որ պատվով եկար, քո երգով այսօր,
Մեր սովետական աշխարհը շքեղ,
Քե՛զ, որ նենգ ցարի սև ճիրաններում
Հպարտ արծվի պես վե՛ր սավառնեցիր
Եվ գալիք մեր այս պայծառ օրերում
Քո անմահության ջահը վառեցիր:
Փա՛ռք քեզ, օ՛, պոետ և քո քնարին,
Որ արևի պես երգեր հյուսեցիր

Եվ գարնան նման՝ մեր ժողովրդի
Երգի աշխարհը դու զարդարեցիր:
Քե՛զ, որ Ստալինյան այս լույս օրերում
Դարձար ավելի անխորտակ ու մեծ,
Ինչպես չի՛ եղել և ոչ մի դարում
Անցած աշխարհի ո՛չ մի բանաստեղծ:

ԴԱՎԹԻ ՀԱՄԲԱՎՐ

Սիրով՝ էպոսի բոլոր բարգմանիչներին.
Я памятник себе воздвиг нерукотворный...
А. Пушкин

1

Ինչպես Իլիան այն Մուրումցի, հսկաների ուժը
բազկում,
Ինչպես Աքիլլն պարթևալանջ, ինչպես
Ռուլանդը սիգապանծ,
Ինչպես Զիգֆրիդը մեծաշուք, կամ Ամիրանը
դյուցազուն, —
Դարերի մեջ բարձր ու անբիծ մեր քաջ
Դավիթն է խոյացած:
Ժողովրդի հոգու, մտքի հավերժական
աղբյուրներից
Անմահական ջուրը խմած մեր դուստները
բյուրավոր,
Մեր հեռավոր երգիչները արդար ձայնով,
շնդալից,
Բանասացները մեր անցած պատումներով
հանդիսավոր, —
Սրտերից-սիրտ պահ տվեցին դյուցազնավեպը
մեր անմեռ,

Փայիայեցին, վառ պահեցին նրա անունը
դարերում,
Ինչպիսի մարդն է իր արյան պես, կյանքի
զնով անմար պահել
Իր առաջին կրակը սուրբ դեռ մարդկության
խանձարուրում:
Չար բռնություն, ոճիրների ամենակոտլ չար
երախում,
Ինչպես Ֆենիքսը անվախճան, մոխիրներից
իր սեփական
Բարձրացել է ժողովուրդն իմ Մելիքների-
դեմ արնախում
Եվ իր անդուլ գոյամարտում պահել երգն իր
նվիրական:
Ոչ մի մրրիկ, կամ փոթորիկ, ոչ մի խորշակ
դարերի մեջ,
Չեն հանգցրել մեր երգը բոց ժողովրդի ձեռքով
զրված,
Քանզի անմահ է աշխարհում ժողովրդի ոգին
անշեջ,
Որի անհուն իմաստությամբ, վսեմ սիրով է
նա ցողված:
Եվ Դավիթը, դյուցազնը մեր, որ սիրառուն
կաթնաղբյուրից
Հզորության, անմահության պապենական
ջուրն է խմել,
Որ հանց անառ մի Ծովասար հպարտ էր, վհհ,
բարձր ու անբիծ, —
Բյուր դարերի ճամբա անցած մեր լուսաշող
դարն է հասել:

իր նախահայր Սանասարի, Մհերների հետ
միասին,
Հեծած հրաշք իր Զալալին, ազատության
տենչը հոգում,
Եկե՛լ է նա մասնակցելու հազարամյա այս
հանդեսին,
Բյուր ազգերի եղբայրության մեր անբաժան
ընտանիքում:

2

Տո՛ւն է այսօր Սովետական Հայրենիքում մեր
անսահման,
Դավթի համբավն է տարածվել, հասել անթիվ
դյուղ ու քաղաք,
Տոն է երգի, եղբայրության, տոն է սիրո,
միասնության,
Ստալինյան պայծառ խոսքի մի շող հանդես
հազարերանգ:
Սովետական ազատ երկրի բյուր երգիչներն
անհուն սիրով,
Ոնց հայրենի դյուցազնավեպ, եղբայրությամբ
անքակտելի,
Իրենց գրչով, իրենց խոսքով — բյուր ազգերի
լեզուներով
Կյա՛նք են տալիս մեր Սասնա տան
քաջաբազուկ հերոսներին:
Եվ կկարդան մեր երգը լույս՝ լուրթ Դնեպրի
կապույտ ափին,
Կկարդա ուսան իր լայնարձակ, անծայրածիր
ստեպներում,

կկարդա իր լեռնաշխարհում վրացին, և
աջրացին,
Կկարդան բյուր փայտահատներ բելոռուսիան
անտառներում՝
Կկարդան օս, բաշկիր, թաթար, հրեա, տաջիկ,
աբխազացի,
Կկարդան բյուր արևալառ ուղբեկները
Ֆերգանայում,
Կկարդան բյուր ղազախ, կալմիկ, աշխատասեր
ուզմուրտացին
Եվ կկարդա նավթագործը Նիժնոֆի
հայրենիքում:
Կանցնի գիրկը հավերժության Դավիթը մեր
որդոց-որդի,
Ինչպես եղբայր մեր ազգերի դյուցազուններն
հավետ անմեռ,
Եվ բյուրաբյուր ժողովուրդներն ինչպես ծաղիկն
իրենց սրտի
Դյուցազնավեպը մեր անմահ սիրո ծովում
կփայփայեն...

Փա՛ռք բազմաթիվ երգիչներին, եղբայրներին
մեր անվանի,
Որ շունչ տվին իրենց լեզվով մեր հանձարի
երգին արդար,
Փա՛ռք մեծազոր դյուցազնամայր սովետական
մեր աշխարհին,
Որ՝ տանում է բյուր ազգերին երջանկության
վսեմ կատար:
Եվ խանդավառ, հրախտապարտ, մեծ
ցնծության այս հանդեսին,

Մեր ժողովուրդը հնամյա մի խոսք ունի իրեն
սրտում.

Փա՛ռք այն մարդուն, կյանք ու արև
հավերժափայլ այն դյուցազնին,
Որ Կրեմլից ամենատես ժողովրդի կյանքն է
կերտում:

ՀԱՆԴԵՍ

Հովհաննես Թումանյանի հիշատակին

Քեզ հետ եմ ահա, սիրելի պոետ,
Կրկին հաճաքդ, սերդ անարատ
Ինձ թե՛վ են տալիս և հոգիս քեզ հետ
Այնքան թեթեւ է, ուրախ ու զվարթ:
Կրկին կարոտով շրթերս հպած
Խմում եմ երգիդ կախարդ աղբյուրից,
Ուր հավերժության նման անսպառ
Ծ'րդդ է կարկաչում լույս ակունքներից...

Կրկին ես անցա քո լեռնաշխարհով,
Ներշնչված քեզնով, քո ջերմ երգերից
Եվ մանկան նման — հնչուն ծիծաղով
Փնջեր հյուսեցի քո ծաղիկներից:
Գուգարք աշխարհն է կրկին զարդարվել
Գարնան կենսաբեր, լիառատ շնչով,
Եվ սար ու հովիտ, անտառ արթնացել, —
Պաղ առվակների ուրախ կարկաչով:
Անցնում եմ ահա... Որքա՛ն հարազատ,
Որքան ծանոթ են վայրերն այս, պոետ,
Կարծես բոլորը, բոլորը այստեղ
Շնչում են քեզնով, ապրում են քեզ հետ:
Քայլում եմ, փնտռում ինձ ծանոթ դեմքեր,
Ժպտում է Լոռին թառած բարձունքում
Ու թևեր առած քայլում դեպի վեր, —

Արևն է շողում՝ լազուր երկնքում:
 Նայում եմ ես ցած՝ ծերուկ Դեվ-Բեդին,
 Որ ծանոթ հանդուլ իր երգն է ասում,
 Հանկարծ... Մի ձայն է հասնում ականջիս,
 Նա եմ նայում ես, և ի՞նչ եմ տեսնում...
 Դեմի քարափից զվարթ ու խնդուն
 Ջեռքով է անում ինձ կայտառ Մարոն,
 Լեռան կածանով— ուրախ կանչերով
 Ներքև են վազում Գիքորն ու Գալոն:
 Նայեմ— աժդահա Սաքոն ձայնելով
 Գետափ է իջնում մի գառնուկ ուսին,
 Թե-թեի տված, կատակով, սիրով
 Գյուղ են բարձրանում Սարոն ու Մոսին:
 Նա ցած եմ իջնում: Կանաչ գետափին
 Գյուղից հավաքված տղա և աղջիկ
 Կանաչ ոստերից ու ծաղիկներից
 Շող պսակներ են հյուսում երջանիկ:
 Փնտռում եմ... Յհա՛... Այդ զվարթ խմբում
 Գտնում եմ նրան... Անո՛ւշն է, պո՛ետ,—
 Այնքա՛ն է փոխվել, ուրախ ու խնդուն,
 Ժպիտն աչքերում, բերկրանքը մի գետ:
 Վիթի պես թեթև, գառնան մի ծաղիկ,
 Էլ քո Անուշին դու չես ճանաչի,
 Սարերն են զարթնում նրա ծիծաղից,
 Արձադանքելով ուրախ կարկաչին:
 Քայլում եմ կրկին... Ահա դիմացից
 Պիոներական մի փոքրիկ ջոկատ,
 Հատու քայլվածքով, խրոխտ, առնացի,
 Դեպ Ջորադեսն է գնում լուսառուտ:
 Նրբ շարքը անցավ, ես ետ նայեցի
 Տեսա ծերունի մի այգեպանի,

Ջեռքը ճակատին, հենված իր փայտին,
 Նայում էր անցնող ժիր մանուկներին:
 Մոտեցա նրան և գլուխ տվի,
 — Բարի օր, պապի, էդ ումն ես նայում—
 — «Որդի, ծոռանս ճանապարհ դրի,
 Հրե՛ն, մտիկ տուր, տես ոնց է քայլում.
 Ինձ մտիկ արա, էս խոր ձորերում
 Հինգ քսան տարիս եկավ անցկացավ,
 Համ որդիներս տեսա երջանիկ,
 Համ ուրախությամբ աչքս լիացավ»:
 Կարծես պատասխան ծերունու խոսքին
 Ջորը սրտաց առույգ կանչերից,
 Լույս աղջիկների մայիսյան երգին
 Արձադանք տվին լեռները նորից:
 Նա ետ նայեցի, աղջիկներն խմբված
 Դեմի կածանով գյուղն են բարձրանում,
 Տղերքը նրանց խմբին միացած
 Նվ կատակում են, և աչքով անում:
 — Է՛յ, Անո՛ւշ... Սարո՛, Մոսի՛... Նկեք
 տո՛ւն:

Նանը ձեր չինար, սեգ բոյին մեռնի,—
 Մայրն է Անուշի, որ ուրախ, խնդուն
 Կանչում էր— կանգնած ձորաբերանին:

Կարծես մի երազ— հրաշք աշխարհում,
 Քայլում եմ ուրախ, թեթև ու զվարթ,
 Դիմացիս ճամպան ձեր գյուղն է տանում.
 Քեզ հետ եմ կրկին, երգիչ հարազատ:
 Նվ ես զմայլված, իմ մտքերի հետ
 Ականջ եմ դնում այս նոր հանդեսին.
 Այսպես փոխվել է աշխարհը, պոետ,

Էլ չես ճանաչի դու քո հերոսին:
 Տե՛ս, հազարամյա քո լեռնաշխարհում,
 Մաղկած դաշտերի, լեռների վրա,
 Հազար Հազարան բլրով է ճախրում,
 Երջանկությո՞ւնն է թռիչքը նրա:
 Եկ կրկին մեզ մոտ, շրջիր բանաստեղծ
 Եվ գյուղ, և քաղաք, արոտ և անտառ,
 Քեզ ժողովուրդը պատիվ կտա մեծ,
 Ու դեմդ կենեն շարքերը կայտառ:
 Կտեսնես կյանքը մեր հավերժափայլ,
 Անժիր անհունի — ոսկե զնգոցով,
 Որը տենչացիր ծարավի նման —
 Ազատ, հարազատ ու պայծառ սրտով:

Վեր նայեմ, և ի՞նչ... Հայրենի գյուղից
 Ժիր մանուկներին իր շուրջը խմբած,
 Մանուկ ժպտով ներքև է իջնում —
 Նա՛... Թումանյանը ուրախ, գրկաբաց:
 Հուզմունքից շիկնած, կարոտով անհուն,
 Ես մոտ եմ վազում և հարց եմ տալիս.
 — Այդ ո՞ւր, բանաստեղծ...
 Ժպիտն աչքերում պատասխան տվեց. —
 — Ողջո՞ւյն նոր աշխարհ, քե՛զ մոտ եմ
 գալիս...

ԵՐԳ ԻՄ ԵՐԿՐԻ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

1

Երգեց պոետն Հոնաստանի
 Հեղինեին կախարդական,
 Որի համար զոհ գնացին
 Դյուցազները տրոյական,
 Երգեց չքնաղ Հեղինեին,
 Երգեց կոհվն օրհասական,
 Որտեղ փայլեց քաջ ու արի
 Աքիլեսի սո՛ւրն հաղթական:

Եվ Հեղինեն Արևածին,
 Հոմերական կոհվը մեծ,
 Որի մասին երգ հյուսեցին
 Քանի՜ երգիչ ու բանաստեղծ,
 Զթառամեց, մնաց անմա՞ր
 Հին պատմության վառ էջերում,
 Ապրում է դեռ օ՛, քանի դար
 Հելլենական հորիզոնում:

Հետո երգեց Ուլիմպիացին,
 Իր քնարով բորբ ու հնչեղ,
 Անմահացավ ֆլորենտացի
 Չքնադագեղ Բեադրիչեն:

Եղավ մի պահ՝ երջանկավետ —
Ծնվեց արքան ճոխ գույների,
Անմահացավ հրաշակերտ
Լույս Մադոննան Ռաֆայելի:

Դարձան նրանք սիրո աղբյուր,
Գեղեցկության լույս դիցուհիք,
Որոնց առջև ծուռկ են իջել
Քանի՜-քանի իտալուհի...
Ելավ պաշտառ մտքի տիտան
Բանաստեղծը խորոտակ ու վես,
Նա՛՝ Վեյմարցի կախարդ հսկան —
Երգեր թողեց արևակեզ.
Երգեց նրան՝ Շառլոտային,
Այն աղջկան նուրբ ու թեթև,
Որի համար տանջվել էին
Երիտասարդ քանի վերթեր:

Ես նայում եմ հանձարների
Այդ երգերին հրաշակերտ,
Որպես ջահել մեր նոր դարի,
Որպես նորեկ մի աշակերտ, —
Միտք եմ անում դարում մեր մեծ
Թե ինչպես են երգով անհուն,
Նրանք կերտել սիրով անկեղծ
Իրենց հոգու գեղեցկուհուն:

Թե ինչպես են վեր սավառնել
Նրանք մտքով արծըլի պես

Եվ թողել մեզ սիրո շուայ
Պատկերները արևակեզ...
Անցան նրանք, սակայն հզոր
Ե՛րբն է այսօր մեզ մնացել,
Անցած դարի փակված սիրո
Դիցուհիքն են անմահացել:

Հեքիաթներում շողաց փերին,
Արևելքի աղջիկը հուր,
Որ շող լցրեց հին դարերի
Ջահեղների սիրտը տխուր.
Սակայն փերին մնաց հեռու,
Երագի պես հոգի մաշող,
Որ կանչում է, սիրտը գերում՝
Տեսիլքի պես անեացող:

Ոստայն դրին բյուր սրտերում
Միայն որպես քնքուշ երագ,
Ինչպես ցնորք մի սուրբ աղջիկ,
Ինչպես շեղած հավերժահարս:
Քանի՜ ջահել փայփայեցին
Նրանց իրենց երկինքներում,
Անձեռագործ արձան դրին
Իրենց խամրող հոգիներում:

Հետո ելան քնքըշալից
Գուսանները ոսկեքնար, —
Եվ լույս առած հանձարներից
Ե՛րբը հոսեց դարերից դար:

Երգ հյուսեցին լեցուն սիրով
Քանի երգիչ, քանի պոետ,
Դովք ասացին դարնանաթով
Աղջիկներին շքնադակերով...

.
.



Սակայն, ո՞վ դուք, անցած կյանքի
Հեռուների բյուր երգիչներ,
Որ երգեցիք նուրբ, քնքշագին
Դալար հյուսեր ու ծով աչեր,
Ասացեք մեզ, ո՞ր աշխարհի,
Ո՞ր լուսնի տակ արդեն անցած,
Ապրել է լավ ու երջանիկ
Ժողովրդի դուստրը պայծառ:

Նա', որ արդար իր քրտինքով
Կյանք է կռել զնդաններում,
Նա', որ լուսն իր պատրանքով
Բաղդ է փնտռել աշխարհներում,
Բայց ոչ մի տեղ չի գտել նա
Ծրջանկության ծովը անտակ
Ծվ խամրել է ծաղկի նման
Սատրապների ճնշումի տակ...

Ահա այսպես ժողովրդի
Աղջիկների քանի սերունդ
Տրորվել են նենգ, տմարդի
Ու չի տեսել կյանքի դարուն,

Քանի՞ սերունդ բյուր, անհամար
Անց են կացել հույսն աչքերում,
Լույս չի՞ փայլել նրանց համար
Հին աշխարհի երկինքներում:

Եվ լցվում է սիրտս ցավով
Իմ քույրերի բաղդի համար,
Նրա՛նց համար, որ տանջանքով
Ապրել են հին դարում խավար,
Նրա՛նց, ստրուկ աղջիկներին
Սերունդներին արդեն անցած,
Որոնց համար բացվել է մի
Ծրջանկության լույս այգաբաց:

2

Քե՛զ եմ երգում սովետական
Աղատ, ուրախ, սրբազան հող,
Որ կյանք տվիր միլիոններին,
Աղջիկներին արևաշող,
Քե՛զ եմ երգում — երջանկություն,
Աշխարհներում երբեք չեղած,
Ձեզ, աղջիկներ, հոկտեմբերյան
Հրաշակերտ լույսով վառված:

Ես երգում եմ ձեր մայրերին,
Ձեր հայրերին մի-մի հերոս,
Որ լույս առան արևներից,
Որպես մի նոր Պրոմեթեոս,
Որ կռվեցին Հոկտեմբերին,
Կամքով անթեք, մտքով որոշ,

Եւ ձեզ տվին պայքարներում
Հաղթանակած Կարմիր դրոշ...

Բարձրացել է իմ աշխարհում
Ժողովրդի չքնաղ ծոցից
Աղջիկների մի նոր սերունդ
Դալար, հզոր ու կենսալից,
Որին գերված նայում են հար
Աստղերն իրենց հեռուններից,
Որ պայծառ է երկնում եղած
Հազարավոր արևներից:

Կնախանձեր ձեր հմայքին
Դեղեցկությանը անցած ու հին,
Քանի գարուն փառքով օծված
Աֆրոդիտե աստվածուհին,
Ապոլլոնը զմայլանքով
Առած քնար հուզումնալից
Կիջներ գերված ձեր թովչանքով
Ոլիմպ սարի գագաթներից...

Ձեզ եմ երգում սիրով անտակ,
Որ ձեր փառքով, գեղեցկությամբ,
Ծովում, օդում, ջրերի տակ,—
Աշխարհ ցնցող հերոսությամբ,
Եոթ գույնի պես ծիածանի,
Նրանից էլ պայծառ ու վառ,
Ջարդարում էք հայրենիքիս
Լույս ճակատը արևամուտ:

Ձեզնից վերել մեր աստղերի
Չնաշխարհիկ բոլլն եմ տեսնում,
Ձեր աչքերում այդ աստղերի
Հավետ վառվող հոլլն եմ տեսնում,—
Եւ ձեր երգը, սերը խնդուն,
Որ պիտ անցնի դարերից-դար,
Պետք է պատմի դալիք մարդուն
Երջանկության մասին արդար:

ՔԱԼԼԱԴ ԱՍՏՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրում եմ մայիսյան ապստամբության հերոս, բոցասիրտ ու պայծառ Ղուկաս Ղուկասյանի անմոռաց հիշատակին.

Մեր քաղաքի բարձունքում մի պուրակ կա
լուսաթեւ,

Այնքան վարդեր են բացվում այնտեղ մայիսին.
Եվ կանգնած է պուրակում հուշարձանը

գրանիտե,
Անդրդվելի, աննկուն ընկեր Ղուկասի:
Խոր գիշեր է... նայում եմ այն պատանուն
առնական,

Որ շողում է լուսնի տակ անասան ու կուռ,
Ես նայում եմ աստղերի շղթաներին դյուլթական,
Եվ քաղաքին լուսառատ, և ծառերին լուռ:

Օ', այս գիշեր աստղերը որքան պայծառ են
փայլում,—

Ողջունեցի ես նրանց ջերմ ու մտերիմ.
Եվ թվաց ինձ, թե նրանք կանչում, աչքով են
անում,

Ձէ՞ որ մանուկ հասակից ընկերներ ենք հին:

— Երկնի պայծառ կրակներ, հավերժության
պես անհուն,

Քանի՜ սերունդ էք տեսել, տենչանք ու կարոտ,
Քանի՜ մարդու տառապող կյանք էք տեսել
աշխարհում,

Ձեր անհամար աչքերով հեռավոր ու մոտ:
Դուք ճամբորդին հալածված, հույս էք տվել
երկնային,

Խաղացել էք բախտի հետ մենավոր կույսի,
Սիրահարներ են նայել ձեր դյուլթական
օվկիանին,

Հայացքներով թախծալից ու դեմքով՝ լուսին...
Բայց ուրիշ է հայրենի իմ աշխարհը հրավառ,
Ուր մարդն ազատ ու անվիշտ նոր կյանք է
լիռում.

Ուր դարավոր զրկանքի շղթաներն ընկան վար,
Եվ նոր մարդը երջանիկ ափեր է գնում...:
Օ՛, դուք երկնի կրակներ, դուք ճամբորդներ
դարավոր,

Որ շողում էք ամեն օր հեռու կամարում,
Ամեն գիշեր դուք արթուն, նվիրական,
բախտավոր

Հայրենիքիս երկնային ծովն էք զարդարում:



Աստղերն հեռվից լսեցին և աչքերը թարթեցին,
Լույս անձրևը ողողեց իմ երկիրը վառ,
Չնաշխարհիկ դու երազ, դու խնդովյուն հրածին,
Դու դյուլթական ու անհաս, հրեղեն կամար:

— Կարճ է, ջահել, այսօրվա մեր զրույցը
լուսաշող,
Սակայն խորը երկնքի լայնությունն նման,
Բարձր ու անհաս, սակայն մոտ, ոնց արևն իր
լույսով,
Ծիածանից էլ պայծառ, շքեղ աննման:
Դու ասում ես ճամբորդին հույս ենք տվել
երկնային,
Խաղացել ենք բախտի հետ մենավոր կույսի,
Սիրահարներ են նայել մեր դոլթական
աշխարհին,
Եվ որ երկնի կամարում ճամբորդներ ենք հին:
Ո՛չ, այդ հայրերն են եղել և մեր պապերը մոռյլ:
Որ դարերով շարունակ լույսով կուրացած,
Սովորյալ են խավարում անմխիթար ու տկար,
Եվ զայրույթն աչքերում նայել դեպի ցած:
Մենք նորաբաց համայնքի որդիներ ենք
անսպառ,
Աստեղային մանուկներ, պատանիներ վառ,
Մենք փայլում ենք այն օրից, երբ մեր մայրը
հնգաթեմ
Կարմիր աստղը շողշողաց աշխարհում պայծառ:
Մենք ծնունդն ենք դոլթական հավետ անմար
աջն աստղի,
Որ կշողա դարերում փառքով անհատակ,
Որ զարդարում է հպարտ դրոշակը ալ կարմիր,
Որպես ազատ մարդկության մի նոր արեգակ:
Երբ անցնում է գիշերը, արշալույսն է
հրդեհվում,
Արևելքում շողում է մայր արևը հուր,

Մենք իջնում ենք երկնքից և բացվում են
ներքևում
Սովետական աշխարհի հմայքները բյուր:
Մենք աննկատ, անշշուկ, շրջում ենք տուն,
գործարան,
Շրջում ենք դաշտ ու արոտ, իջնում գետնի տակ,
Շող ենք տալիս նոր երկրի զավակներին
անհամար,
Բոցավառում սրտերը լույսով անհատակ:
Թե ուզում ես մեզ տեսնել դու ցերեկը երկրում,
Նայիր կարմիր աշխարհի ջահելներին վառ,
Որոնք աշխարհ են կերտում, որից երկիրն է
թնդում,
Դու կտեսնես մեզ նրանց աչքերում պայծառ:
Դու կտեսնես մեզ նրանց արևային աչքերում,
Նրանց հզոր սրտերում դու մեզ կտեսնես,
Մեզ կտեսնես ամենուր սովետական
աշխարհում,
Ձուված միլիոն սրտերին անբաժան ու վես:
Իսկ երբ գիշեր է արդեն, երբ աշխարհն է
քուն մտնում,
Մենք փայլում ենք կամարում մեր հայրենիքի,
Որպես անխախտ մի համայնք, լույսի աղբյուր
անհատնում,
Որպես որդիքն անհամար— ազատ Գալիքի:
Դու չկարծես, որ միայն մենք զարդերն ենք
երկնքի,
Կամ այն աստղերը մոլոր, դարերում խավար,
Մենք բյուրաբյուր ջահելի վառվող սիրտն ենք
ու հոգին,
Մենք մեր ազատ երկրրի պահակներն ենք վառ:

Մենք այս անհաս բարձունքից, խոր գիշերին
միշտ զգաստ,
Ոնց մեր սահմանը հսկող մարտիկ քաջարի,
Պահպանում ենք հայրենի մեր աշխարհը միշտ
զգաստ,

Աստեղային աչքերով, անվախ ու արի:
Եվ մեր անամի ու անծիր աստղեշղթան
փառավոր,
Որ շողում է անսպառ, հրեղեն լույսով,
Օ', լեցուն է մեր անհաղթ հայրենիքի
բախտավոր
Պատրանքներով, հավատով և անմար հույսով...

Մեր քաղաքի բարձունքում կանաչ պուրակը
շողաց
Եվ իմ սիրտը ողողեց մի անծայր կարոտ,
Պատվանդանից գրանիտե ընկեր Ղուկասը
ժպտաց
Ջինջ հայացքում աստղերի պատրանքը ծանոթ:
Մենք երկուսով նայեցինք մեր աստղերին
դուրթանքով,
Հավերժության պես անծիր կրակներին վառ
Եվ թվաց ինձ երկինքը իր անհամար աստղերով
Մի պսակ է բարձրագիծ մեր երկրի համար:
Փառք քեզ հավետ, լուսահորդ սովետական
իմ երկիր,
Դու մարդկության ծով փարոս, լույսով
անհատակ,
Երջանկալից, նոր կյանքի դու ջահակիր առաջին,
Դու անսպառ ու անմար հզոր արեգակ:

ՎԵՐՋԵՐԳԻ ՓՈՆԱՐԵՆ

ՓՆՏՌՈՒՄ ԵՄ ՔԵՉ, ԾԱՆՈԹ ԻՄ ՀԱՆԳ...

Փնտռում եմ քեզ, ծանոթ իմ հանգ,
Իմ երգերի ամեն տողում,
Մեկ փախչում ես ինձնից արագ,
Մեկ առկայծում ու մեկ շողում:

Քեզ զգում եմ այնպես մոտիկ,
Ինչպես սրտիս զարկն եմ լսում,
Ու երգերիս առավոտին
Բուռն տենչանքով քեզ սպասում:

Բաղձանքն է իմ, որ դու լինես
Պարզ ու վճիտ և հասարակ,
Եվ տողերս զինվորի պես
Գան ու անցնեն քո երգի տակ:

Լինես հնչուն ինչպես ծիծաղ,
Հայացքի պես լինես մանկան,
Լինես արթուն, լինես խիզախ,
Լինես շեփոր մի մարտական:

Լինենք մեկտեղ մենք մտերիմ,
Լինես ուրույն, լինես՝ որոշ:

Որ ես պարզեմ հրգեցրն իմ—
 Ոնց հաղթության կարմիր դրոշ:

Երբ գտնեմ քեզ, ծանոթ իմ հան,
 Ինչպես մայրը իր զավակին,
 — Ե՛րբ, դու կիջնես հրապարակ
 Մի նոր շեշտով, որոտագին:

Ներս կըմտնես կյանքի դռնից
 Այն ժամ հուրը քո ճակատին,
 Ինչպես մի օր Հոռոմ մտավ
 Ինքը՝ հզո՛ր Գարիբալդին:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Էջ

Գովք Հայաստանի 5

1. ՆՈՐ ԱՇԽԱՐՀ

* * *	9
Սերտ	10
Երբ դրված Գորի քաղաքում	11
Երբ ժամացույցի մասին	16
Իմ տղային, որ պիտի դա	18
Կոմերիտսիությանը	20
Մեր աստղը	21
Տաղ դրված Ջահելության շեմքին	23
Քանի՜-քանի դարուն անցել	24
Լիության երգ	25
Լսի՛ր ինձ, ընկեր...	26
Պաղա՛ Աղել...	27
Հուշարձանը	28
Սերգեյ Կիրով	30
Հոկտեմբերի հասակակիցների երգը	32
Երեք խիզախները	34
Նոր տարվա երգ	36
Իմ երկրի ուժը	38
Սովետական օդաչուների երգը	41
Նոր տարվա բաժակածառ	44
Քաղիո կոմիտեին	47
Մի կաթի՛կ ես լինեի...	50

Այս առաջում	51
Ամպերի հետ	52
Սոսինները արշալույսին	53
Ծովափին	54
Ուրախ պատկեր	55
Մայիս	56
Զմռան ուրախություն	57
Ամպրոպ	58
Գիշերը պարտիզում	59
Ողջուն քեզ, լճակ...	60
Պատրանք	62
Լուսնյակ գիշեր	63

3. ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՍՆԵՐ

Ոչինչ, ոչինչ չեմ մոռացել...	64
Սիրո ալիք	66
Կղզու սերը	67
Կարոտ	68
Ո՞ւր անցար...	69
Օ՛, սև աչեր...	70
Եղջերու	72
Վերհուշ	73
Կան, առ վայրկյան, էլ մի՛ անցիր...	75
Սիրո երգեր	77
Կարոտի երգ	79
***	81
Սիրո երգ՝ դրված դնայքում	82
Ցերեկն անցավ՝ իրիկուն է...	84
Ժամանակի և սեր	85

Աստղաթաղ	86
Կյանքի կարոտը	88
Իսպանուհու օրորը	91
Նրկու երգ	93
Զարտասանված բաժակաճառ	94
Բայլենք մեկտեղ...	95
Վաստակ	97
Անմահ Շոթան	98
Խնճույք	100
Ծիծեռնակ	102
Մանուկն ու լուսինը	103
Խիզախ մրրկահավը	105
Ողջուն քեզ պոետ...	107
Դավթի համբավը	110
Հանդես	115
Նրգ իմ երկրի աղջիկներին	119
Բալլադ պատղերի մասին	126
Վերջերգի փոխարեն	131



Կազմը, ձևույր և զվտագարդերը
ճկաւի՛ Բ. Մ Ե Ս Բ Ո Վ Բ Ե Լ Ե Ի

Պատ. խմբագիր՝
Գ. Ս ա ր յ ա Գ
Տեխ. խմբագիր՝
Ստ. Ա լ ր ու Գ յ ա Գ
Սրբագրիչ՝
Մ. Ե ր ց Գ Կ յ ա Գ

ՎՓ 2735. Հրատ. 5385.

Պատվեր 788. Տիրած 3000.

Հանձնված է արտագրութուն 28/XI—1940 թ.

Ստորագրված է տպագրութուն 16/XII—1940 թ.

Հայագիտորտի տպարան, Երևան, Լենինի 63.

ՀՀ Ազգային գրադարան



NL0313561